

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿՈՒՆՔ  
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄ

Հետազոտություն



ԵՐԵՎԱՆ 2022

ՀՏԴ 342.722:34.037

ԳՄԴ 67.400

Ա. 858

*Հետազոտող համահեղինակներ՝*

Դավիթ Գյուրջյան

Էլինա Գյուրջյան

Սերգեյ Գրիգորյան

*Համահեղինակ խմբագիր՝*

Գենյա Պետրոսյան

**Արդար դատաքննության իրավունք դատական ակտերի հարկադիր կատարում.- Եր.:**

Ա. 858 Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, 2022 - 52 էջ:

Ուսումնասիրությունը հայերեն հրատարակություն է, որը պատրաստել է Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը՝ իրավական հետազոտության հիման վրա: Ուսումնասիրության բովանդակությունը և արտահայտված տեսակետները Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամինն են և հեղինակներինը:

ՀՏԴ 342.722:34.037

ԳՄԴ 67.400

ISBN 978-9939-1-1489-7

© Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, 2022

## Բովանդակություն

Նախաբան.....	4
ԲԱԺԻՆ 1.....	5
Հանրային իրավական դրամական պահանջների հիման վրա կատարողական վարույթներ հարուցելու գործընթացում արձանագրված խնդիրներ, ծանուցման ոչ բավարար ընթացակարգեր .....	5
ԲԱԺԻՆ 2.....	14
Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու և արգելանքից հանելու գործընթացին առնչվող խնդիրներ.....	14
ԲԱԺԻՆ 3.....	19
Հարկադիր էլեկտրոնային աճուրդներին առնչվող խնդիրներ .....	19
ԲԱԺԻՆ 4.....	24
Օրինական ուժի մեջ մտած ակտերի կամավոր կատարման ընթացակարգերի և կատարողական թերթի պահանջները չկատարելու համար սահմանված պատասխանատվության արդյունավետությանն առնչվող խնդիրներ .....	24
ԲԱԺԻՆ 5.....	30
Կատարողական ծախսերին և բռնագանձված գումարի բաշխմանն առնչվող խնդիրներ .....	30
ԲԱԺԻՆ 6.....	35
Դատական ակտերի չկատարման կամ ձգձգումներով կատարման հետևանքով հասցված վնասի հատուցմանն առնչվող խնդիրներ.....	35
ԲԱԺԻՆ 7.....	41
Դրամական պահանջներին առնչվող դատական ակտերի կատարման խնդիրները պետության՝ որպես պարտապան հանդես գալու գործերով, անժառանգ գույքի բռնագանձման հետ կապված խնդիրներ .....	41
ԲԱԺԻՆ 8.....	47
Հարկադիր կատարողների՝ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակին առնչվող խնդիրներ .....	47

## Նախարան

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասը երաշխավորում է քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող ցանկացած պահանջ դատարանի առջև ներկայացնելու իրավունքը: Այդպիսով, այն ներառում է «դատարան դիմելու իրավունքը», որի բաղկացուցիչ մասն է դատարանի մատչելիության իրավունքը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք գործերով<sup>1</sup> շեշտել է, որ այս իրավունքը պատրանքային կլիներ, եթե Պայմանավորվող պետության ներպետական իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական դատական ակտը մնար անկատար՝ ի վնաս կողմերից մեկի: Դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով որևէ դատարանի կողմից կայացված վճռի կատարումը պետք է դիտարկվի որպես դատական քննության անբաժանելի մաս:

Հայաստանի Հանրապետության նկատմամբ կայացված մի շարք վճիռներով<sup>2</sup> Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում՝ դիմումատուների օգտին կայացված դատական ակտերը չկատարելու կամ ձգձգումներով կատարելու հիմքով: Միննույն ժամանակ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 46-րդ հոդվածի ուժով Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է պարտավորություն, ի թիվս անհատական միջոցների, ձեռնարկելու վճիռների կատարմանն ուղղված ընդհանուր միջոցներ՝ նոր համանման խախտումները կանխարգելելու նպատակով:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են դատական ակտերի հարկադիր կատարմանն առնչվող օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան՝ դատական պրակտիկայի, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և այլ իրավասու պետական մարմինների կողմից տրամադրված կամ հրապարակված տեղեկատվության վերլուծության հիման վրա: Առանձին հարցերի շուրջ իրականացվել է նաև միջազգային փորձի և միջազգային իրավական չափորոշիչների վերլուծություն՝ ՀՀ օրենսդրական կարգավորումների համադրմամբ:

Հետազոտության նպատակն է վեր հանել դատական ակտերի հարկադիր կատարման փուլում առկա հիմնական խնդիրները, վերլուծել դրանց պատճառները և ներկայացնել անհրաժեշտ լուծումներ:

---

<sup>1</sup> Տե՛ս *Հորնսբին ընդդեմ Հունաստանի* [Hornsby v. Greece], 1997 թվականի մարտի 19, § 40, *Վճիռների և որոշումների մասին զեկույցներ* 1997-II, և *Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի* [Burdov v. Russia], թիվ 59498/00, § 34, ՄԻԵԴ 2002-III):

<sup>2</sup> Տե՛ս *Ավաքեմյանն ընդդեմ Հայաստանի* (39563/09, 03.10.2017 թ.), *Նիկողոսյանն ընդդեմ Հայաստանի* (75651/11, 04.10.2019 թ.), *Դնգիկյանն ընդդեմ Հայաստանի* (66328/12, 30.11.2020 թ.), *Ֆիդանյանն ընդդեմ Հայաստանի* (62904/12, 04.10.2019 թ.), *Պապոյանն ընդդեմ Հայաստանի* (7205/11), *Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի* (31761/04, 01.12.2009 թ.) գործերով կայացված վճիռները:

## ԲԱԺԻՆ 1

# Հանրային իրավական դրամական պահանջների հիման վրա կատարողական վարույթներ հարուցելու գործընթացում արձանագրված խնդիրներ, ծանուցման ոչ բավարար ընթացակարգեր

### ԽՆԴԻՐ

*Հանրային իրավական դրամական պահանջներով դեռևս ուժի մեջ չմտած և անձին վարչական ակտի մասին պատշաճ չճանուցելու հիմքով անբողոքարկելի չդարձած վարչական ակտերի հիման վրա կատարողական վարույթ հարուցելու վերաբերյալ խնդիրներ*

### ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ ՎՀՎՎ օրենք) սահմանված է դրամական պահանջների կատարման կարգը, ըստ որի՝ դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (Օրենք) սահմանված կարգով<sup>3</sup>:

Օրենքի 31.1 հոդվածի իմաստով՝ հանրային իրավական դրամական պահանջի հիմքով կատարողական վարույթ հարուցելու համար ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն կամ ՀԿԱԾ) ներկայացվող փաստաթղթերը պետք է համապատասխանեն օրենքով սահմանված պահանջներին, այդ թվում՝ ՎՀՎՎ օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասին, որի համաձայն՝ դրամական պահանջները նույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հարկադիր կատարման ներկայացնելիս վարչական մարմինը ներկայացնում է դրամական պահանջները հավաստող համապատասխան վարչական ակտը, այդ ակտի մասին **սույն օրենքով սահմանված կարգով** իրազեկելը կամ **այլ օրենքներով սահմանված կարգով** հասցեատիրոջը հանձնելը կամ այլ կերպ **պատշաճ** ծանուցելը հավաստող ապացույցները և կատարման վերաբերյալ գրություն. . . :

Այսինքն՝ դրամական պահանջը հարկադիր կատարման ներկայացնելու «փաթեթը» **պետք է ներառի**.

<sup>3</sup> ՎՀՎՎ օրենք, հոդված 88:

1. համապատասխան վարչական ակտը,
2. օրենքով սահմանված կարգով հասցեատիրոջը պատշաճ ծանուցելը հավաստող ապացույցները,
3. կատարման վերաբերյալ գրությունը:

Ինչպես տեսնում ենք, հիշյալ՝ ՎՀՎՎ օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասը հղում է պարունակում ինչպես նույն հոդվածի 1-ին մասին (1. Դրամական պահանջները ենթակա են կատարման **անբողոքարկելի** վարչական ակտերի հիման վրա), այնպես էլ վարչական ակտի մասին հասցեատիրոջը իրազեկելու վերաբերյալ նույն օրենքով սահմանված կարգին (այսինքն՝ ՎՀՎՎ օրենքի 59-րդ հոդվածին) կամ **այլ օրենքներով սահմանված կարգին**:

Այսպես, վարչական իրավախախտումների հիման վրա կայացված վարչական ակտերի մասին ծանուցման կարգը սպառնալից կերպով սահմանված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով: Մասնավորապես, վարչական ակտի մասին ծանուցման միջոց է այն հասցեատիրոջն անձամբ հանձնելը, դրա անհնարինության դեպքում՝ հանձնման այնպիսի եղանակով ծանուցելը, որով կհավաստվի պարտավոր անձի՝ վարչական ակտի մասին ծանուցումը ստացած լինելու փաստը: Միայն նախորդ երկու եղանակով անձին ծանուցելու անհնարինության դեպքում օրենքով պատշաճ ծանուցումն ապահովելու միջոց է դիտարկվում հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տվյալ ակտի հրապարակումը, ընդ որում՝ համապատասխան դիմումի առկայության դեպքում նորմը սահմանում է հրապարակելուն զուգահեռ դիմումում նշված հեռահաղորդակցության միջոցով ակտը հասցեատիրոջը ևս մեկ անգամ ուղարկելու պարտականություն:

***Այսպիսով, կատարողական վարույթ հարուցելիս Ծառայությունը օրենքի ուժով («Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք, հոդված 31.1. և ՎՀՎՎ օրենք հոդված 88, մաս 4) պարտավոր է ստուգել համապատասխան գրությանը կից ներկայացվող փաստաթղթերը (ՎՀՎՎ մասին օրենք, հոդված 88, մաս 4)՝ հավաստիանալու համար, որ վարչական ակտը անբողոքարկելի է դարձել՝ (ՎՀՎՎ մասին օրենք, հոդված 88, մաս 1-ին, որի պահանջներին հղում է արվում նույն հոդվածի 4-րդ մասում) այդ ակտի մասին օրենքով սահմանված կարգով իրազեկելու կամ հասցեատիրոջը հանձնելու կամ այլ կերպ պատշաճ ծանուցելու արդյունքում և կատարման է ներկայացվել օրենքով սահմանված ժամկետում:***

Մինչդեռ դատական գործերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ Ծառայությունը, ստանալով հանրային իրավական դրամային պահանջը կատարելու մասին գրություն, պատշաճ չի հետազոտում դրան կից ներկայացվող փաստաթղթերը, մասնավորապես չի կատարում վարչական ակտը անբողոքարկելի դարձած լինելու **հանգամանքի բազմակողմանի ստուգում** (այդ թվում՝ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տվյալ ակտի հրապարակմանը նախորդող ծանուցման կարգի սպառման վերաբերյալ):

Բացի դրանից՝ արձանագրվել են դեպքեր, երբ Ծառայությունը կատարողական վարույթ է հարուցել բացառապես կատարման վերաբերյալ գրությունների հիման վրա՝ առանց վարչական մարմնի կողմից պահանջի հիմք հանդիսացած որոշման անբողոքարկելի

դառնալու մասին որևէ ապացույց ներկայացնելու<sup>4</sup>, ինչպես նաև այն դեպքերում, երբ հենց կատարման վերաբերյալ գրությամբ նշված (կամ չնշված) տեղեկատվությունից ակնհայտ է դրա անհամապատասխանությունը ՀՀ ՎՀՎՎ մասին ՀՀ օրենքի 88-րդ հոդված 4-րդ մասի պահանջներին<sup>5</sup>:

Վկայակոչված իրավական ակտերով սահմանված պահանջների՝ Ծառայության կողմից խախտումը պարբերաբար արձանագրվում է դատական պրակտիկայում՝ ինչպես օրինական ուժի մեջ մտած տասնյակ դատական ակտերով<sup>6</sup>, այնպես էլ դեռևս օրինական ուժի մեջ չմտած վճիռներով և ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշումներով<sup>7</sup>, ըստ որում՝ դատարանների միասնական դիրքորոշումը հետևյալն է. . ***Ծառայության պարտականությունն է նախքան կատարողական վարույթ հարուցելը կատարման վերաբերյալ գրություններին կից ներկայացվող՝ պարտապանի պատշաճ ծանուցման վերաբերյալ ապացույցների առկայության ստուգումը և դրանց գնահատումը:*** Այս դիրքորոշումը ուղղակիորեն բխում է ՎՀՎՎ մասին օրենքի 59-րդ հոդվածի, 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներից, ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի պահանջներից:

Ի թիվս այլ դատական ակտերի, թիվ ՎԴ/2469/05/19 վարչական գործով ուժի մեջ մտած վճռով մանրամասն պարզաբանվել են հիշատակված օրենսդրական պահանջներից բխող գործողությունները: Այսպես, «... այնպիսի դեպքերում, երբ *վարչական ակտի վերաբերյալ անձը ծանուցվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով, վարչական մարմինը ակտը հարկադիր կատարման ներկայացնելիս, պետք է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը ներկայացնի նաև այն փոստային թղթակցությունը, որով հիմնավորվում է, որ անձի հայտնած հասցեով ուղարկված որոշումը վերադարձվել է, ծանուցման փաստը չի հաստատվել կամ հասցեատերը հրաժարվել է այն ստանալուց: Միայն նշված ապացույցների առկայության պայմաններում վարչական ակտի հարկադիր կատարման վերաբերյալ դիմումը կարող է համարվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին համապատասխան, իսկ քանի դեռ դիմումին կից ներկայացված չեն վերը նշված ապացույցները, դիմումը չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին և այդ դեպքում, հարկադիր կատարողը՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31.1-ին հոդվածի կարգավորմամբ, պետք է վերադարձնի դիմումը, այնինչ, տվյալ դեպքում Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը անտեսել է նշված իրավանդությունների պահանջները, որոնց ուժով դիմումը պետք*

<sup>4</sup> Տե՛ս, օրինակ, թիվ ՎԴ/3231/05/20 գործով վճիռը և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշումը:

<sup>5</sup> Տե՛ս, օրինակ, թիվ ՎԴ/0224/05/21, ՎԴ/0222/05/21, ՎԴ/0848/05/21, ՎԴ/0875/05/21, ՎԴ/0846/05/21, ՎԴ/0863/05/21, ՎԴ/2224/05/21, ՎԴ/3201/05/21, ՎԴ/6216/05/21, ՎԴ/10384/05/20, ՎԴ/10522/05/20 դատական գործերը:

<sup>6</sup> Տե՛ս ՎԴ/0841/05/19, ՎԴ/0933/05/19, ՎԴ/1334/05/19, ՎԴ/1885/05/19, ՎԴ/2600/05/19, ՎԴ/0127/05/19, ՎԴ/0126/05/19, ՎԴ/4424/05/19, ՎԴ/4522/05/19, ՎԴ/5382/05/19, ՎԴ/5374/05/19, ՎԴ/5677/05/19, ՎԴ/6217/05/19, ՎԴ/7076/05/19, ՎԴ/7105/05/19, ՎԴ/8860/05/19, ՎԴ/9444/05/19, ՎԴ/10448/05/19, ՎԴ/1236/05/20, ՎԴ/2033/05/20, ՎԴ/2039/05/20, ՎԴ/3747/05/20, ՎԴ/4387/05/20, ՎԴ/4353/05/20, ՎԴ/5710/05/20, ՎԴ/10341/05/20, ՎԴ/10356/05/20, ՎԴ/0225/05/21, ՎԴ/0205/05/21, ՎԴ/0961/05/21, ՎԴ/2469/05/19, ՎԴ/5472/05/19, ՎԴ/4174/05/21 դատական գործերը:

<sup>7</sup> Տե՛ս ՎԴ/6721/05/19, ՎԴ/8368/05/19, ՎԴ/8390/05/19, ՎԴ/0698/05/20, ՎԴ/2832/05/20, ՎԴ/3231/05/20, ՎԴ/4042/05/20, ՎԴ/4815/05/20, ՎԴ/9823/05/20, ՎԴ/9827/05/20, ՎԴ/0218/05/21, ՎԴ/0865/05/21, ՎԴ/1733/05/21, ՎԴ/1724/05/21, ՎԴ/1998/05/21, ՎԴ/2137/05/21, ՎԴ/2245/05/21, ՎԴ/2247/05/21, ՎԴ/2230/05/21, ՎԴ/2516/05/21, ՎԴ/2977/05/21, ՎԴ/3231/05/21, ՎԴ/4135/05/21, ՎԴ/4340/05/21, ՎԴ/5468/05/21, ՎԴ/6596/05/21, ՎԴ/6585/05/21, ՎԴ/10482/05/21 դատական գործերը:

*է համարվեր օրենքին չհամապատասխանող և ոչ իրավաչափորեն հարուցել է կատարողական վարույթ...»<sup>8</sup>:*

Արձանագրենք նաև, որ դատական գործերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ վիճարկված բազմաթիվ դեպքերում վարչական մարմնի ընդունած ակտի մասին հասցեատիրոջը պատշաճ ծանուցելու վերաբերյալ ապացույցները բացակայել են ոչ միայն հարկադիր կատարման վարույթի նյութերում, այլև նման ապացույց չի ներկայացվել համապատասխան վարչական մարմնի կողմից<sup>9</sup>: Հետևաբար, դատական պրակտիկայում պարբերաբար արձանագրվող փաստերը վարչական ակտի մասին հասցեատիրոջը պատշաճ ծանուցելու խնդրի վերաբերյալ պետք է ազդակ հանդիսանան Ծառայության համար՝ նշված օրենսդրական պահանջի կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու համար:

Արձանագրենք նաև, որ ՀՀ Սահմանադրական դատարանի 2015 թ.-ի մայիսի 26-ի թիվ ՍԴՈ-1210 որոշմամբ շեշտել է այն հանգամանքը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախկին կարգավորումներով (*Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի կանոնակարգումներով՝ անձը համարվում էր ծանուցված նույնիսկ այն դեպքում, երբ նա «...չի եղել տրանսպորտային միջոցի գրանցման (հաշվառման) կամ վարորդական վկայական ստանալու կամ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու ժամանակ իր կողմից նշված հաշվառման (գտնվելու) կամ բնակության վայրում...»*) խախտվում էին անձի պատշաճ ծանուցման և դատական պաշտպանության իրավունքները, քանի որ անձի նկատմամբ պետության հարկադրանքի միջոցները կիրառվում էին առանց անձի տեղեկացվածության, առանց նրան հնարավորություն ընձեռելու՝ օգտվելու օրենքով նախատեսված պաշտպանական կառուցակարգերից և օրենքով իր վրա դրված պարտականությունը կամովին կատարելու հնարավորությունից<sup>10</sup>:

## **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Վերոգրյալ խնդրի լուծման նպատակով առաջարկվում է ձեռնարկել հետևյալ միջոցները.

1. ՀԿԱԾ ծառայողներին ցուցում տալ հետևյալի վերաբերյալ.

1.1 հարկադիր կատարողը պարտավոր է վարչական մարմնին վերադարձնել կատարման վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը բոլոր այն դեպքերում, երբ կատարման վերաբերյալ գրությանը կցվել է միայն վարչական ակտի ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով անձին ծանուցելու վերաբերյալ քաղվածքը՝ առանց փոստային թղթակցության ներկայացման, որով հիմնավորվում է, որ անձի հայտնած

<sup>8</sup> Մեջբերում թիվ ՎԴ/2469/05/19 վարչական գործով ուժի մեջ մտած դատական ակտից:

<sup>9</sup> Հարկ է նկատել, որ ուսումնասիրված գործերով դատարանները բոլոր դեպքերում երրորդ անձի կարգավիճակով ներգրավում են համապատասխան վարչական մարմիններին, սակայն մեծ մասամբ վերջիններս որևէ դիրքորոշում չեն ներկայացնում: Թեև գործի լուծման տեսանկյունից էական հանգամանք չէ, սակայն, դատարանները որոշ դեպքերում արձանագրում են նաև կոնկրետ վարչական մարմնի հարուցած վարչական վարույթի նյութերում ակտի մասին հասցեատիրոջը պատշաճ ծանուցելու վերաբերյալ ապացույցների բացակայության փաստը (ՎԴ/2046/05/20, ՎԴ/10356/05/20):

<sup>10</sup> ՀՀ ՍԴ 26.05.2015 թ.-ի թիվ ՍԴՈ-1210 որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=98081>:



հասցեով ուղարկված որոշումը վերադարձվել է, ծանուցման փաստը չի հաստատվել կամ հասցեատերը հրաժարվել է այն ստանալուց:

1.2. սահմանել արդյունավետ վերահսկողության մեխանիզմներ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պահանջներին չհամապատասխանող փաստաթղթերը վերադարձնելու պահանջի կատարման նկատմամբ, այդ թվում՝ յուրաքանչյուր խախտման դեպքում ծառայողական քննությունների իրականացման և պատասխանատվության միջոցների կիրառման միջոցով:

2. Հանրային իրավական դրամական պահանջներով ՀԿԱԾ դիմող վարչական մարմիններին պաշտոնական գրությամբ ծանուցել կատարման վերաբերյալ գրությունները ներկայացնելիս ՎՀՎՎ մասին օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների ապահովման անհրաժեշտության վերաբերյալ: Մասնավորապես գրություններին կից պետք է ներկայացնել փոստային թղթակցության վերաբերյալ ապացույցներ, որոնցով կհիմնավորվի, որ անձի հասցեով ուղարկված որոշումը ստացվել է վերջինիս կողմից (հանձնվել է): Իսկ այն դեպքերում, երբ ուղարկված որոշումը վերադարձվել է, ծանուցման փաստը չի հաստատվել, կամ հասցեատերը հրաժարվել է այն ստանալուց, ապա ՀՀ հրապարակային ծանուցումների կայքում որոշումը հրապարակելու վերաբերյալ ապացույցի հետ մեկտեղ կատարման վերաբերյալ գրություններին կից պետք է ներկայացվեն նաև նշված փաստերը հաստատող փոստային թղթակցության ապացույցներ:

## *ԽՆԴԻՐ*

---

*Հանրային իրավական դրամական պահանջներով՝ կատարման վերաբերյալ գրությունների ներկայացման և դրանց հիման վրա կատարողական վարույթների հարուցման ժամկետների խախտումներ*

---

## *ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

Հանրային իրավական դրամական պահանջները ներկայացվում են հարկադիր կատարման օրենքին համապատասխան՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց, իսկ վարչական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու դեպքում՝ հետաձգելու կամ տարաժամկետելու ժամկետի ավարտից հետո՝ **եռամսյա ժամկետում**:

Միաժամանակ, բացի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված եռամսյա ժամկետից, որը կարգավորում է վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո այն կատարման ներկայացնելու ժամկետի հարցը,

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը սահմանում է նաև վարչական իրավախախտման գործի վերաբերյալ որոշման կատարման համար վաղեմության ընդհանուր ժամկետ:

Միաժամանակ ՎՀՎՎ մասին օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխան որոշումը կատարման ներկայացնելու համար սահմանում է կոնկրետ պահանջներ: Մասնավորապես, ի թիվս այլնի հանրային իրավական դրամական պահանջները կատարման ներկայացնելիս կատարման վերաբերյալ գրությունը պետք է բովանդակի վարչական ակտն անբողոքարկելի դառնալու տարին, ամիսը և ամսաթիվը, հակառակ դեպքում՝ կատարման վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը հարկադիր կատարողի կողմից ենթակա են վերադարձման Օրենքի 31.1 հոդվածի հիմքով:

Դատական գործերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են դեպքեր, որոնցով հաստատվել է վարչական մարմնի կողմից համապատասխան որոշումը կատարման ուղարկելու ժամկետի խախտում և, դրանով պայմանավորված, ՀՀ ԱՆ ՀԿԱԾ կողմից կատարողական վարույթ հարուցելու անթույլատրելիությունը<sup>11</sup>:

Բացի կատարման ներկայացնելու ժամկետի խախտումներից՝ դատական պրակտիկայում արձանագրվել են նաև Ծառայության կողմից կատարողական վարույթ հարուցելու՝ Օրենքով սահմանված եռօրյա ժամկետի խախտումներ<sup>12</sup>:

Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը հարկադիր կատարողի համար պահանջ է առաջադրում կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը կայացնել հարկադիր կատարման վերաբերյալ գրությունը վարչական մարմնից ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում: Այնուամենայնիվ, գործնականում եղել են դեպքեր, երբ հիշյալ որոշումը կայացվել է կատարողական գրությունը ստանալուց հետո ընդհուպ ութ ամիս անց:

### *ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

**Վերոգրյալ խնդրի լուծման նպատակով առաջարկվում է** արդյունավետ վերահսկողություն իրականացնել հանրային իրավական դրամական պահանջներով կատարման վերաբերյալ գրությունների ներկայացման և դրանց հիման վրա կատարողական վարույթների հարուցման ժամկետների պահպանման նկատմամբ, այդ թվում՝ յուրաքանչյուր խախտման դեպքում ծառայողական քննությունների իրականացման և պատասխանատվության միջոցների կիրառման միջոցով:

### *ԽՆԴԻՐ*

<sup>11</sup> Տե՛ս, ի թիվս այլոց, ՎԴ/1159/05/19 (գործով առկա է ուժի մեջ մտած դատական ակտ՝ ՀՀ վճարելի դատարանի գովարց բուրքը վարույթ լարումը սարժալու սաարս որոշման որոշոց), Վ 1/10050/05/19, Վ 1/0070/05/21 դատարան գործերով ակտերը:

<sup>12</sup> Տե՛ս, ի թիվս այլոց, ՎԴ/0867/05/21, ՎԴ/0220/05/21, ՎԴ/1922/05/21, ՎԴ/2228/05/21, ՎԴ/6615/05/21, ՎԴ/6216/05/21, ՎԴ/0227/05/21, ՎԴ/0224/05/21, ՎԴ/0875/05/21 և Կատարողական գրությունը ակտերի և Կատարողական վարույթի հարուցման ժամկետների խախտումները:

## ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28.1 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշումները և ծանուցումներն ուղարկվում են պատվիրված նամակով, եթե կատարողական վարույթի ընթացքում իրականացվող գործողությունների կատարման համար որոշակի ժամկետի հաշվարկը պայմանավորված է համապատասխան որոշումը կամ ծանուցումն ստանալու փաստով:

Վերոգրյալ նորմի գործնական կիրառության վերաբերյալ հարցմանն ի պատասխան՝ Ծառայությունը հայտնել է, որ պատվիրված նամակով ծանուցելու պարտավորություն ունի բացառապես այն դեպքում, երբ կատարողական վարույթի ընթացքում իրականացվող գործողությունների կատարման համար որոշակի ժամկետի հաշվարկը պայմանավորված է համապատասխան որոշումը կամ ծանուցումն ստանալու փաստով: Ընդ որում, Ծառայությունը լրացուցիչ պարզաբանել է. «... օրենքի 28.1 հոդվածը պատվիրված նամակով հանձնման ենթակա է համարում այն որոշումները, որոնց ստանալու փաստով պայմանավորված է կատարողական վարույթի ընթացքում որոշակի գործողությունների կատարման համար ժամկետի հաշվարկը, իսկ հարկադիր կատարողի որոշումների բողոքարկումն այս համատեքստում չի կարող համարվել կատարողական վարույթի ընթացքում կատարման ենթակա գործողություն»:

Այսպիսով, օրենքի հիշյալ կարգավորումները միայն կատարողական վարույթի «բնականոն ընթացքն» ապահովելու համար են սահմանում պարտապանի կողմից հարկադիր կատարողի որոշումների ստացումը երաշխավորելու հնարավորություն և չեն հետապնդում անձի՝ հարկադիր կատարման փուլում օրենքով սահմանված իրավունքների և, առհասարակ, պատշաճ վարչարարության իրավունքն իրացնելու հնարավորություն ընձեռելու նպատակ: Գտնում ենք, որ Օրենքի գործող կարգավորումը խնդրահարույց է ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով սահմանված պատշաճ վարչարարության իրավունքի ապահովման տեսանկյունից և մի շարք դեպքերում հանգեցնում է հասցեատիրոջ կողմից իր իրավունքների իրացման հնարավորությունից զրկմանը:

Նշված կարգավորումները խնդրահարույց են նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 2020 թվականի մայիսի 12-ի թիվ ՍԴՌ-1529<sup>13</sup> և 2015 թվականի մայիսի 26-ի թիվ ՍԴՌ-1210 որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումների տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրական դատարանը թիվ ՍԴՌ-1529 որոշմամբ անդրադառնալով լսված լինելու հիմնարար իրավունքի տարրերին՝ արձանագրել է, որ վարչական վարույթում լսված լինելու իրավունքով օժտված է վարչական ակտի հասցեատեր և վարչական վարույթի մասնակից չհանդիսացող յուրաքանչյուր անձ, եթե տվյալ վարույթի արդյունքում ընդունվելիք միջամտող անհատական ակտը կարող է անմիջական ազդեցություն ունենալ վերջինիս իրավունքների և օրինական շահերի վրա: Սահմանադրական դատարանը փաստել է, որ հարկ վճարողներին հարկային մարմնի կողմից պարտադիր ծանուցման ենթակա փաստաթուղթն էլեկտրոնային եղանակով ուղարկելը՝ առանց այդ փաստաթղթի մուտքագրումը հավաստող ծանուցագրի ստացման, չի կարող դիտարկվել բավարար պայման, որպեսզի հարկ վճարողը համարվի

<sup>13</sup> 12.05.2020, ՍԴՌ-1529 հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142486>

պատշաճ ծանուցված: Նման եզրահանգման համար հիմք կարող է լինել, մասնավորապես, բազմաթիվ տեխնիկական խնդիրների հետևանքով հարկ վճարողի կողմից նման ծանուցում չստանալու հավանականությունը:

Դատարանն արձանագրել է նաև, որ անձի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված ծանուցումը ողջամիտ ենթադրությամբ պետք է հասած լինի նրան, սակայն ի բացառություն պատշաճ իրազեկման ընդհանուր կանոնների՝ փաստաթղթի, այսինքն՝ նաև միջամտող վարչական ակտի ուժի մեջ մտնելը սուսկ այդ փաստաթղթի հասցեատիրոջն ուղարկված ծանուցման՝ հասցեատիրոջը հասնելու ողջամիտ ենթադրությամբ պայմանավորելը մասնավոր անձից ոչ պատշաճ ակնկալիքի դրսևորում է, որով ծանուցման ամբողջ բեռը, ներառյալ՝ տեխնիկական խոչընդոտների, դրվում է մասնավոր անձի վրա: Այսպիսով, Սահմանադրական դատարանը հանգել է հետևության, որ Հարկային օրենսգրքի վիճարկվող դրույթով նախատեսված էլեկտրոնային ծանուցման համակարգի կիրառումը՝ առանց ստացման մասին հավաստման, չի կարող գնահատվել որպես արդյունավետ հարկային վարչարարություն:

2015 թվականի հունվարի 27-ի իր թիվ ՄԴՈ-1189 որոշման մեջ Սահմանադրական դատարանը ընդգծել է, որ «(...) շահագրգիռ սուբյեկտների կողմից ..... պատշաճ ծանուցված լինելը՝ վերջիններիս իրավունքների պաշտպանության *conditio sine qua non* (պայման, առանց որի հնարավոր չէ) կարևոր պայման է, առանց որի հնարավոր չէ երաշխավորել նրանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Ուստի ծանուցման ինստիտուտի իրավական կանոնակարգումները պետք է կրեն ոչ թե ձևական բնույթ, այլ պետք է ուղղված լինեն (...) սուբյեկտի (...)՝ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների պաշտպանությանը: Նշված նպատակն իրագործելու համար օրենսդիրը պետք է նախատեսի ..... արդյունավետ ծանուցման (...) ընթացակարգ, որը գործնականում կբացառի (...) շահագրգիռ անձանց օբյեկտիվորեն ոչ իրազեկված լինելու իրավիճակները»<sup>14</sup>:

Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի Դատական ակտերի հարկադիր կատարման հաջողված փորձի վերաբերյալ ուղեցույցի (CEPEJ)(2015)10)<sup>15</sup> 44-րդ կետը սահմանում է, որ կատարման ընթացակարգերի թվայնացումը օգնում է ժամանակ խնայելու որոշակի նախնական ապահովման կամ հարկադիր միջոցների իրականացման համար և մեծացնում է գնորդների հավանական թիվը հանրային աճուրդներում: Հետևաբար այն կարող է խրախուսվել անդամ պետությունների կողմից՝ պայմանով, որ այն գույքակցվի բոլոր նախագուշակական միջոցների հետ, որոնք երաշխավորում են իրավական որոշակիություն: Օրինակ՝ կարող են միջոցներ ձեռնարկվել պաշտպանելու էլեկտրոնային եղանակով փոխանցված ցանկացած տեղեկատվության գաղտնիությունն ու ամբողջականությունը, մինչդեռ փաստաթուղթը հանձնող անձի ինքնությունը պետք է ստուգվի և ապահովվի փաստաթղթերի ստացումը այն անձանց կողմից, որոնց հասցեագրված են դրանք, օրինակ՝ ստեղծելով ստացման հաստատման համակարգ:

<sup>14</sup> 2015 թվականի հունվարի 27-ի թիվ ՄԴՈ-1189 որոշում, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=95382>:

<sup>15</sup> Commission for the Efficiency of Justice (CEPEJ), Good practice guide on enforcement of judicial decisions, CEPEJ(2015)10, available at <https://rm.coe.int/european-commission-for-the-efficiency-of-justice-cepej-good-practice-/16807477bf>.

Արդարադատության արդյունավետության Եվրոպական հանձնաժողովի՝ Հարկադիր կատարման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի գործող հանձնարարականի արդյունավետ իրականացման վերաբերյալ ուղեցույցով<sup>16</sup> սահմանվում է. «... կողմերի պատշաճ ծանուցումն արդար դատաքննության անհրաժեշտ տարր է՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով: ... 19. Բոլոր դեպքերում ծանուցումը պետք է խրախուսի պարտապանին կամավոր կատարել դատարանի որոշումը և ներառի նախազգուշացում, որ չկատարելու դեպքում կարող են կիրառվել հարկադիր միջոցներ, ներառյալ, անհրաժեշտության դեպքում, կարող են գանձվել լրացուցիչ ծախսեր: 20. Ծանուցումների հանձնման գործառույթը պետք է հնարավոր լինի վերապահել հարկադիր կատարողին: Այդ նպատակով անդամ պետությունները պետք է պայմաններ ստեղծեն փաստաթղթերի հանձնման ապահով եղանակի համար: 21. Եթե ծանուցումներն առաջացնում են իրավունքներ կամ պարտականություններ, հարկադիր կատարողի պարտականությունն է ապահովել, որ կողմերին համապատասխան ծանուցումը հանձնվի ժամանակին»:

Եվրոպական շատ երկրներ ունեն էթիկական կանոններ և/կամ մասնագիտական չափորոշիչներ, որոնք վերաբերվում են հարկադիր կատարողների և պարտատերերի ու պարտապանների միջև հարաբերություններին (օրինակ՝ Գերմանիա, Անգլիա, Բելգիա, Բուլղարիա, Շոտլանդիա, Իսպանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Վրաստան, Հունաստան, Լատվիա, Լիտվա, ՆՀՀ Մակեդոնիա, Մոլդովա, Նիդեռլանդներ, Պորտուգալիա, Սլովակիա, Չեխիա): Այս կանոնները վերաբերում են, ի թիվս այլ հարցերի, կողմերին ծանուցումների ուղարկմանը այն փուլի վերաբերյալ, որում տվյալ պահին գտնվում է կատարողական վարույթը: Ավելին, շահագրգիռ կողմերին իրազեկելու ընթացակարգի վերաբերյալ ավելի մանրամասն կարգավորումներ են սահմանվում համապատասխան կատարողական միջոցառումների վերաբերյալ օրենսդրական կամ ենթաօրենսդրական ակտերում: Օրինակ՝ պարտապանները տեղեկացվում են կատարմանն ուղղված միջոցներ չձեռնարկելու հետևանքների վերաբերյալ, ինչպես նաև ծանուցվում են իրենց հասանելի իրավական պաշտպանության միջոցների մասին<sup>17</sup>:

Մերթիայի օրենսդրությունը սահմանում է պարտապանների ծանուցման բազմաստիճան համակարգ<sup>18</sup>:

Կատարողական վարույթի շրջանակներում ծանուցումների խնդրին է անդրադարձել նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը, ի թիվս այլ զեկույցների՝ 2020 թ. -ի տարեկան հաղորդմամբ: Պաշտպանն արձանագրել է, որ 2020 թվականի ընթացքում հասցեագրած բողոքների ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ «համակարգային առումով շարունակում են չլուծված մնալ կատարողական վարույթի շրջանակներում քաղաքացիներին պատշաճ ծանուցելու հետ կապված օրենսդրական և գործնական խնդիրները: Մասնավորապես, 2020 թվականի ընթացքում ևս Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ

<sup>16</sup> European Commission on the Efficiency of Justice (CEPEJ). Guidelines for a Better Implementation of the Existing Council of Europe's Recommendation on Enforcement, available at <https://rm.coe.int/16807473cd>.

<sup>17</sup> CEPEJ-ի Կատարման լավագույն փորձի ուղեցույց, կետ 4., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://rm.coe.int/european-commission-for-the-efficiency-of-justice-cepej-good-practice-/16807477bf>:

<sup>18</sup> Law on Enforcement and Security Interest, available at <https://www.paragraf.rs/propisi/law-on-enforcement-and-security-interest.html>:

այն մասին, որ անձինք չեն ծանուցվել իրենց նկատմամբ հարուցված կատարողական վարույթների, իրենց գույքի և դրամական միջոցների վրա արգելանքի կիրառման և հարկադիր կատարողի կայացրած այլ որոշումների մասին: Այդ մասին նրանք տեղեկացել են, երբ, օրինակ, ցանկացել են իրենց պարտավորությունները մարել բանկի նկատմամբ, կամ որևէ փոխանցում կատարել, սակայն բանկից տեղեկացրել են արդեն իսկ հարուցված կատարողական վարույթի, ինչպես նաև կիրառված արգելանքների մասին»<sup>19</sup>: Նույն խնդիրն արձանագրվել է նաև 2021 թ. -ի տարեկան հաղորդմամբ<sup>20</sup>:

## *ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

**Վերոգրյալ խնդրի լուծման նպատակով առաջարկվում է** վերականգնել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 2019 թվականի հուլիսին կատարված փոփոխությունները<sup>21</sup> գործող իրավակարգավորումը՝ հարկադիր կատարողի որոշումները պատշաճ ծանուցմամբ հանձնելու վերաբերյալ կամ ապահովել որոշումների և ծանուցումների հանձնումը ցանկացած այլ արդյունավետ եղանակով, որը թույլ կտա հավաստել հասցեատիրոջ կողմից հիշյալ փաստաթղթերի ստացումը:

## **ԲԱԺԻՆ 2**

### **Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու և արգելանքից հանելու գործընթացին առնչվող խնդիրներ**

#### *ԽՆԴԻՐ*

*Հայցի ապահովման շրջանակներում մի քանի բանկերում առկա դրամական միջոցների միաժամանակյա արգելադրման պայմաններում պահանջի չափը գերազանցող դրամական միջոցների ապարգելադրման ժամկետներին առնչվող խնդիրներ*

<sup>19</sup> ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2020 թ. տարեկան հաղորդում, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf>:

<sup>20</sup> ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2021 թ. տարեկան հաղորդում, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf>:

<sup>21</sup> 09.07.2019 թ., ՀՕ-126-Ն

## ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իրավակիրառ պրակտիկայում արձանագրված հաջորդ խնդիրը առնչվում է հայցի ապահովման շրջանակներում կիրառված արգելանքի շրջանակներում մի քանի բանկերում առկա դրամական միջոցների միաժամանակյա արգելադրմանը: Մասնավորապես կատարողական վարույթի շրջանակում պարտապանի՝ մի քանի բանկերում դրամական միջոցների առկայության դեպքում դրանց նկատմամբ արգելանք կիրառելիս բոլոր հաշիվներում առկա դրամական միջոցները արգելադրվում են հայցի ապահովման մասին որոշմամբ սահմանված գումարի չափով<sup>22</sup>: Նման իրավիճակում, կախված տարբեր բանկերում առկա բանկային հաշիվների քանակից, կարող է արգելադրվել պահանջվող գումարը կրկնակի, եռակի և ավել անգամ գերազանցող գումար:

Որպես հետևանք՝ անձը ոչ իրավաչափորեն զրկվում է նաև այն դրամական միջոցների հասանելիության և տնօրինման հնարավորությունից, որոնք ենթակա չեն արգելադրման կամ սահմանափակման:

Օրենքի 44.1 հոդվածի դրույթների համաձայն՝ արգելանքի տակ գտնվող պարտապանի գույքը հարկադիր կատարողի որոշմամբ արգելանքից հանվում է, եթե՝ . . . . 7) դրամական միջոցների նկատմամբ կիրառված արգելանքը գերազանցում է պահանջատիրոջ պահանջի և կատարողական գործողությունների կատարման ծախսերի չափը:

Այդ դեպքում հարկադիր կատարողը համապատասխան չափով մասնակի հանում է պարտապանի դրամական միջոցների վրա դրված արգելանքը՝ բանկեր ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրությունների միջոցով, որոնց ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը՝ համաձայնեցնելով համապատասխան նախարարության հետ:

Ըստ Ծառայության հայտնած դիրքորոշման՝ կատարողական վարույթ հարուցելու և արգելանք կիրառելու վերաբերյալ հաղորդագրությունն ուղարկվում է առևտրային բոլոր բանկերին: Հետագայում որևէ կամ մեկից ավելի բանկում առկա պարտապանի դրամական միջոցների բավարարության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և գումարը բռնագանձելու դեպքում մյուս առևտրային բանկերում պարտապանի դրամական միջոցներն ապարգելադրվում են: Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի հունիսի 21-ի թիվ 104-Ն որոշման Հավելվածի Ձև 1-ի 5. 1 կետով սահմանված է, որ որոշումը ստանալուց հետո բանկը պարտավոր է առավելագույնը 4 աշխատանքային օրվա ընթացքում կատարել որոշման պահանջները և ուղարկել պատասխան հաղորդագրություն: Հարկադիր կատարողը պարտապանի բանկային հաշվում առկա դրամական միջոցներն արգելանքից հանելու վերաբերյալ որևէ հիմք չի հայտ գալու դեպքում այդ հիմքն չի հայտ գալու պահից եռօրյա ժամկետում, հիմք ընդունելով Օրենքի 28-րդ

<sup>22</sup> Խնդրի մասին բազմիցս բարձրաձայնել է նաև ՄԻՊ-ը, հերթական անգամ՝ նաև Պաշտպանին 2021 թվականի ընթացքում հասցեագրված բողոքների հիման վրա: 2021 թ.-ի տարեկան հաղորդումը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.ombuds.am/images/files/022666474d87ff84a86acf39be58bec8.pdf>:

հողվածի պահանջը, արգելանքից հանելու վերաբերյալ համապատասխան հաղորդագրությունն ուղարկում է առևտրային բանկերին:

Ծառայության դիրքորոշման համաձայն՝ «... գործընթացի առավելագույն օպերատիվությունը, արդյունավետությունն ապահովելու և պարտապանների դժգոհությունները կանխելու նպատակով Ծառայությունը շարունակական աշխատանք է տանում՝ պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում առկա դրամական միջոցների արգելադրման և ապաստարանային գործընթացում մարդկային միջամտությունը առավելագույն հնարավոր չափով բացառելու և գործընթացն առավելագույնս ինքնաշխատ եղանակով իրականացնելու համար»:

Արձանագրվել է նաև, որ ներկայումս այդ գործընթացն ինքնաշխատ եղանակով հնարավոր է իրականացնել միայն եզրափակիչ դատական ակտերի հիման վրա բռնագանձվող դրամական միջոցների դեպքում, սակայն հայցի ապահովման շրջանակում ավել չափով կիրառված արգելանքը կարող է հանվել հարկադիր կատարողի համապատասխան որոշումը կոնկրետ բանկին (բանկերին) հաղորդելու միջոցով:

Հարկ է շեշտել, որ Օրենքի 46-րդ հոդվածով սահմանված դրույթի ուժով պարտապանի հաշիվները սպասարկող բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը հարկադիր կատարողի որոշմամբ սահմանված չափից ավել պահած գումարի համար պարտավոր է յուրաքանչյուր օրվա համար վճարել տույժ՝ նշված գումարի 0.1 տոկոսի չափով: Պարտապանը կարող է պահանջել պատճառված վնասի փոխհատուցում, եթե ապացուցում է, որ պատճառված վնասը գերազանցում է օրենքով սահմանված տույժի չափը: Դրան գուրգահեռ, սակայն, առկա չէ պատասխանատվության միջոց՝ հարկադիր կատարողի մեղքով սահմանված չափից ավել (մի քանի բանկերում միաժամանակյա արգելադրման դեպքում) գումարի արգելադրումը օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ պահպանելու դեպքում:

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի հունիսի 21-ի թիվ 104-Ն որոշմամբ սահմանված 4-օրյա ժամկետի կրճատման տեխնիկական հնարավորությունը պարզելու նպատակով կատարված հարցմանն ի պատասխան՝ Կենտրոնական բանկը հայտնել է, որ, իրեն հասանելի տեղեկությունների համաձայն, ՀՀ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից բանկային հաշիվների վրա արգելանք կիրառելու վերաբերյալ հաղորդագրությունները որպես կանոն ուղարկում են նույն օրը: Այնուամենայնիվ, պատասխան հաղորդագրության ստացման որոշակի դեպքերում առկա խնդիրները պայմանավորված են տեխնիկական խնդիրներով կամ վրիպակներով, որոնք, սակայն, համաձայն Կենտրոնական բանկին հայտնի տեղեկությունների, չեն կրում համակարգային բնույթ և մեծամասամբ պայմանավորված չեն բանկի գործողություններով:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով պարտապանի մոտ մի քանի առևտրային բանկերում դրամական միջոցների առկայության դեպքում՝ որոշմամբ սահմանված գումարը կրկնակի, եռակի և ավել անգամ գերազանցող գումար արգելադրելու ռիսկը, հայցի ապահովման շրջանակներում ավել չափով արգելադրված դրամական միջոցները ապաստարանային գործընթացի երկարաձգման հետ կապված գործոնները և, դրանցով պայմանավորված, անձի սեփականության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման վտանգը՝ անհրաժեշտ է



նվազեցնել այս գործընթացում թե՛ առևտրային բանկերի համար նախատեսված 4-օրյա ժամկետը, թե՛ հարկադիր կատարողի որոշումների ընդունման համար նախատեսված ընդհանուր 3-օրյա ժամկետը: Տվյալ դեպքում որոշմամբ սահմանված չափը գերազանցող դրամական միջոց արգելադրելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքում հարկադիր կատարողը անհապաղ պետք է միջոցներ ձեռնարկի անհրաժեշտ տեղեկությունները ճշտելու և ավել չափով արգելադրված գումարը ապաստարկադրելու ուղղությամբ:

Իրավակիրառ պրակտիկայում արձանագրվել են դեպքեր, երբ Ծառայությունը առևտրային բանկերից որոշման կատարման հաղորդագրությունները ստանալուց հետո Օրենքով սահմանված ժամկետում անհրաժեշտ քայլեր չի ձեռնարկել պարտապանի դրամական միջոցների վրա ավել չափով դրված արգելանքը հանելու ուղղությամբ: Այսպես, 08291411, 08289947 և 08286452 համարներով կատարողական վարույթների շրջանակներում Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը 09.11.2021 թ. -ի արգելանք կիրառելու մասին որոշումը ուղարկել էր բանկերին, և պարտապանի երկու տարբեր բանկերում առկա երկու հաշիվների դրամական միջոցների վրա 09.11.2021 թ. -ին արգելանք էր կիրառվել: Բանկերը 4-օրյա ժամկետում Ծառայությանը տեղեկացրել էին արգելանք կիրառելու որոշման կատարման մասին: Այդպիսով, թեև Ծառայությունը տեղեկացվել էր, որ պարտապանի մեկ բանկային հաշվում առկա դրամական միջոցները բավարար էին հանրային իրավական դրամական պահանջի կատարման համար, սակայն մյուս բանկային հաշվին առկա միջոցները շարունակել են արգելանքի տակ գտնվել՝ անկախ այն հանգամանքից, որ Ծառայությունը պարտավոր էր մասնակի ազատել արգելադրված դրամական միջոցները: Հարկ է նշել նաև, որ բերված օրինակներում 08289947 կատարողական վարույթի շրջանակներում վարչական ակտով պարտապանի կողմից դրամային պահանջը կատարվել էր մինչև այն հարկադիր կատարման ուղարկելը:

Մեկ այլ գործով հայցի ապահովման շրջանակներում արգելադրվել են իրավաբանական անձի բանկային հաշիվներում առկա միջոցները՝ յուրաքանչյուր հաշիվը՝ որոշմամբ սահմանված 2.000.000 ՀՀ դրամի չափով: Կրկնակի ավել չափով կիրառված արգելանքը հնարավորինս սեղմ ժամկետում հանելու համար իրավաբանական անձը ստիպված է եղել դիմելու սպասարկող բանկեր, որպեսզի նրանք արգելանքը կիրառելու մասին հրատապ կարգով տեղեկացնեն հարկադիր կատարողին, ինչն իրականացվել է դիմելու նույն օրը: Այնուհետև վերջինս ստիպված է եղել դիմել հարկադիր կատարողին, որը, սակայն, նախ ժամանակ է պահանջել իր կողմից կայացվող որոշումը վերադասի հետ քննարկելու համար, այնուհետև պահանջել է, որ բանկերից տրամադրվի նաև տեղեկանք առ այն, որ կիրառված արգելանքները դրվել են տվյալ կատարողական վարույթի շրջանակներում:

Վերոնշյալ իրավակիրառ պրակտիկան ոչ միայն թերի օրենսդրական կարգավորումների, համարժեք պատասխանատվության միջոցների բացակայության հետևանք է, այլև հարկադիր կատարողների ոչ բավարար մասնագիտական պատրաստվածության:

Դատական ակտերի հարկադիր կատարման հաջողված փորձի վերաբերյալ ուղեցույցը (CEPEJ(2015)10)<sup>23</sup> սահմանում է նաև հարկադիր կատարողների մասնագիտական գիտելիքներին և կարողություններին առնչվող սկզբունքներ: Այսպես, Ուղեցույցի 16-20-րդ կետերով սահմանվում է հարկադիր կատարողների վերապատրաստման բարձր մակարդակի անհրաժեշտությունը: Այդ պահանջը պայմանավորված է ոչ միայն հարկադիր կատարողների կողմից կիրառման ենթակա ընթացակարգերի բարդությամբ և տարաբնույթ խնդիրների իրականացման պարտականություններով, այլև հանրության հարգանքը և վստահությունը վայելելու անհրաժեշտությամբ: Այս առումով մասնակից պետությունները կարող են հարկադիր կատարողների վերապատրաստման մակարդակը համադրելի դարձնել իրավաբանի կրթություն պահանջող այլ մասնագետների (փաստաբանների, նոտարների կամ դատավորների) վերապատրաստման պահանջների հետ: Ուղեցույցով շեշտվում է, ի լրումն սկզբնական տեսական գիտելիքների, հարկադիր կատարողի պաշտոնին հավակնող բոլոր թեկնածուների կողմից հարկադիր կատարողների մոտ բավականաչափ տևողությամբ պրակտիկա անցնելու անհրաժեշտությունը, ինչը թույլ կտա նրանց ձեռք բերել բազային գործնական գիտելիքներ և պատկերացում կազմել մասնագիտական իրավիճակների մասին: Պրակտիկայի ավարտից հետո գիտելիքների ստուգումը կարող է իրականացվել մասնագիտական քննությունների միջոցով:

## *ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

### **Վերոգրյալ խնդրի լուծման նպատակով առաջարկվում է.**

1. Նվազեցնել հայցի ապահովման շրջանակներում դրամական միջոցների արգելադրման գործընթացում թե՛ առևտրային բանկերի համար նախատեսված 4-օրյա ժամկետը, թե՛ հարկադիր կատարողի որոշումների (ապարգելադրման) ընդունման համար նախատեսված ընդհանուր 3-օրյա ժամկետը՝ հաշվի առնելով պարտապանի մոտ մի քանի առևտրային բանկերում դրամական միջոցների առկայության դեպքում որոշմամբ սահմանված գումարը գերազանցող չափով արգելադրելու ռիսկը:
2. Հայցի ապահովման մասին որոշմամբ սահմանված չափը գերազանցող դրամական միջոց արգելադրելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքում սահմանել հարկադիր կատարողի կողմից անհրաժեշտ տեղեկությունները ճշտելու և ավել չափով արգելադրված գումարը անհապաղ ապարգելադրելու պարտականությունը:
3. Սահմանել պատասխանատվություն Հարկադիր կատարումն ապահովող ծառայության համար՝ դրամական միջոցների գերազանցող մասը չապարգելադրելու յուրաքանչյուր կետանցված օրվա համար՝ որոշակի տույժի տեսքով:
4. Արդյունավետ միջոցներ ձեռնարկել հարկադիր կատարողների մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացման, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների զարգացման ուղղությամբ:

<sup>23</sup> Commission for the Efficiency of Justice (CEPEJ), Good practice guide on enforcement of judicial decisions, CEPEJ(2015)10, available at <https://rm.coe.int/european-commission-for-the-efficiency-of-justice-cepej-good-practice-/16807477bf>.

### ԲԱԺԻՆ 3

#### Հարկադիր էլեկտրոնային աճուրդներին առնչվող խնդիրներ ԽՆԴԻՐ

---

*Հարկադիր էլեկտրոնային աճուրդների կազմակերպման ընթացակարգերի  
պահպանման խնդիրներ*

---

#### ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ վարչական դատարանում քննված թվով հիսուն գործերի հետազոտության արդյունքում կարող ենք փաստել, որ Ծառայության կողմից կատարողական թերթի հիման վրա հարուցված կատարողական վարույթների շրջանակներում անցկացվող հարկադիր էլեկտրոնային աճուրդները պարտապանների կողմից հիմնականում վիճարկվում են

«Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին», «Ապրանքագիտական փորձաքննություն նշանակելու մասին» որոշումների, ինչպես նաև, որպես հետևանք՝ առուվաճառքի պայմանագիրն ու անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջներով: Հետազոտության առարկա գործերով որպես վիճարկման հիմք վկայակոչվել է՝ որպես պարտապան աճուրդին առնչվող որոշումների, աճուրդի օրվա և ժամի, «Ապրանքագիտական փորձաքննություն նշանակելու մասին» որոշման, ինչպես նաև լոտի մեկնարկային գնի մասին պատշաճ ծանուցված չլինելը:

Թիվ ՎԴ/0361/05/19 վարչական գործով պարտապան հանդիսացող հայցվորը, ի թիվս այլոց, նշել է, որ «Ապրանքագիտական փորձաքննություն նշանակելու մասին» որոշմամբ նշանակել է փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է «Օլիվեր Գրուպ» ՍՊ ընկերությանը, որը եղել է կողմնակալ, քանի որ հանդիսացել է պարտատեր բանկի գործընկերը, և այդ որոշումը չի ուղարկվել իրեն, ինչպես նաև փաստարկել է, որ «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը ևս չի ստացվել իր կողմից: Սույն գործով դատարանը, բավարարելով հայցադիմումը, գտել է, որ կատարողական վարույթի շրջանակներում կայացված որոշումների մասին հայցվորին պատշաճ ծանուցելու վերաբերյալ ապացույցները բացակայում են, ինչից էլ եզրակացրել է, որ, ըստ էության, հայցվորը զրկվել է փորձագետի անաչառության վերաբերյալ կասկած հարուցող հանգամանքների առկայության դեպքում փորձագետին բացարկ հայտնելու իրավունքից, ինչպես նաև լոտի մեկնարկային գնի մասին պատշաճ ծանուցվելու դեպքում՝ հարկադիր կատարման բաժնի դեպոզիտ հաշվին կամ դրամարկղ համապատասխան վճարում կատարելու և լոտի ավելի բարձր մեկնարկային գին սահմանելու իր իրավունքն իրացնելու հնարավորությունից<sup>24</sup>:

Թիվ ՎԴ/0795/05/19 վարչական գործով կատարողական վարույթի նյութերում բացակայել է փորձագետ նշանակելու մասին որոշումը պարտապանի կողմից ստանալը հավաստող ապացույց, հետևապես Դատարանը արձանագրել է, որ նման պայմաններում պարտապանը զրկվել է փորձագետին բացարկ հայտնելու իրավունքի իրացման հնարավորությունից, ինչն էլ իր հերթին հիմք է «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը անվավեր ճանաչելու համար:

Թիվ ՎԴ5/0038/05/19 վարչական գործով պարզվել է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին հրապարակային ծանուցումը կայքում հրապարակվել է «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշման մասին պարտապանին պատշաճ ծանուցելուց հետո օրենքով սահմանված տասնօրյա ժամկետի խախտմամբ: Բացի դրանից՝ արձանագրվել է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին հրապարակային ծանուցումներում բացակայել են աճուրդի ձևի և անցկացման կարգի, աճուրդում հաղթողին որոշելու կարգի, կազմակերպչի կողմից սահմանված նախավճարի չափի, վճարման կարգի և ժամկետների, լոտն ուսումնասիրելու ամսաթվի, ժամանակի և վայրի վերաբերյալ տեղեկությունները: Ավելին, Դատարանը արձանագրել է, որ «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը կայացվել է «Դատական

<sup>24</sup> Նույնական փաստական հանգամանքերի վերաբերյալ նույնաբովանդակ վճիռներ են հրապարակվել թիվ ՎԴ/0630/05/19, ՎԴ/0731/05/19 գործերով:

ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված եռօրյա ժամկետի խախտմամբ:

Առկա են նաև համանման հիմնավորումներով մի շարք այլ դատական գործերով ակտեր<sup>25</sup>:

Անհրաժեշտ ենք համարում հատուկ անդրադառնալ Ծառայության իրավակիրառ գործունեության խնդրին՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդի ընթացքում լոտի մեկնարկային գնի մասին պարտապանին և պահանջատիրոջը պատշաճ ծանուցման պարտականության մասով:

Դատական գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ծառայությունը «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքը մեկնաբանում է այնպես, որ, ի տարբերություն հարկադիր աճուրդի, հարկադիր էլեկտրոնային աճուրդի դեպքում օրենքը չի նախատեսում լոտի մեկնարկային գնի մասին պարտապանին և պահանջատիրոջը պատշաճ ծանուցելու պարտականություն:

Այս հարցի վերաբերյալ տարբեր գործերով կայացված դատական ակտերով օրենսդրական կարգավորումներին տրված մեկնաբանությունները եղել են հակասական: Այսպես.

Թիվ ՎԴ/0927/05/19 վարչական գործով Դատարանը գտել է, որ «... օրենսդիրը հարկադիր էլեկտրոնային աճուրդի դեպքում կիրառելի է համարել հարկադիր աճուրդում լոտի գնահատմանը վերաբերող՝ 30-րդ հոդվածի միայն 1-ին և 2-րդ մասերով սահմանված իրավանքները: Մինչդեռ աճուրդի ներկայացվող լոտի մեկնարկային գնի մասին պարտապանին ծանուցելու հարկադիր կատարողի պարտականությունը և պարտապանի կողմից լոտի ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու իրավունքը սահմանված են Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով, որն օրենսդիրը հարկադիր էլեկտրոնային աճուրդի նկատմամբ կիրառելի չի համարել. . . »:

Թիվ ՎԴ/0731/05/19 գործով Դատարանը գտել է, որ «... Օրենքի 35.1 հոդվածը չի բացառում 30-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառումը, ուստի ինչպես հարկադիր, այնպես էլ հարկադիր էլեկտրոնային աճուրդ իրականացնելիս հարկադիր կատարողն ունի պարտականություն Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված աճուրդի ներկայացվող լոտի մեկնարկային գնի մասին պարտապանին և պահանջատիրոջը (պահանջատերերին) պատշաճ ծանուցելու պարտականություն՝ նշելով լոտի ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու վերաբերյալ կողմի իրավունքի իրականացման կարգն ու ժամկետները. . . »<sup>26</sup>:

Թիվ ՎԴ/6569/05/19 գործով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը, բեկանելով դատական ակտը, հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «... հարկադիր կատարողը պարտապանի գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու վերաբերյալ որոշում կայացնելուց առաջ չի կրում «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ աճուրդի ներկայացվող լոտի մեկնարկային գնի մասին պարտապանին և պարտատիրոջը ծանուցելու և այդպիսով վերջիններիս՝ լոտի ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու հնարավորություն տալու պարտականություն... »: Գործը գտնվում է ՀՀ Վճռաբեկ դատարանի վարույթում:

<sup>25</sup> Տե՛ս, օրինակ, ՎԴ/1547/05/19, ՎԴ/3245/05/19, ՎԴ5/0128/05/19, ՎԴ5/0136/05/19, ՎԴ/8469/05/19, ՎԴ/8892/05/19, ՎԴ/9740/05/19, ՎԴ/9740/05/19 դատական գործերով եզրափակիչ դատական ակտերը:

<sup>26</sup> Նույնական դիրքորոշում է արտահայտվել նաև այլ գործերով, օրինակ՝ ՎԴ/10743/05/19:

Թիվ ՎԴ5/0136/05/19 գործով և՛ ՀՀ Վարչական դատարանը, և՛ ՀՀ Վարչական վերաքննիչ դատարանը գտել են, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի դեպքում կիրառելի է աճուրդի ներկայացվող լոտի մեկնարկային գնի մասին կողմերին ծանուցելու Ծառայության պարտականությունը: Սույն գործով 2022 թվականի փետրվարի 22-ին հրապարակվել է Վճռաբեկ դատարանի որոշումը, որով լուծում է տրվել առկա տարակարծությանը: Որոշմամբ մասնավորապես արձանագրվել է հետևյալը.

«... Ունենալով հարկադիր աճուրդների կազմակերպման և անցկացման կարգը սահմանող նորմերը համակարգելու և բովանդակությամբ համասեռ հոդվածները մեկ գլխի ներքո միավորելու նպատակ՝ օրենսդիրը դրանք ներառել է «Հարկադիր աճուրդներ» վերտառությամբ գլխում: Ավելին՝ էլեկտրոնային աճուրդն իր անվան մեջ ինքնին պարունակում է «հարկադիր» եզրույթը, նույնանում են հարկադիր աճուրդի և հարկադիր էլեկտրոնային աճուրդի անցկացման փաստական հիմքերը, ինչպես նաև լոտի առարկաները»:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը հարկադիր աճուրդի կազմակերպման և անցկացման որոշակի առանձնահատկություններով օժտված տեսակ է, և այդ առանձնահատկությունների հաշվառմամբ էլ դրա իրականացման կարգն ու պայմանները սահմանված են առանձին հոդվածով:

Անդրադառնալով հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառելիության հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

«Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված կարգով լոտի գնահատում իրականացնելու կանոնների՝ հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ կիրառելի լինելու պահանջն ուղղակիորեն ամրագրված է նույն Օրենքի 35.1-րդ հոդվածի 5-րդ մասով:

... Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված գործողությունների կատարումը դեռևս բավարար չէ լոտի մեկնարկային գինը որոշված համարելու համար: Այն ներկայացնում է մեկը մյուսի հետ փոխկապակցված, որոշակի հաջորդականություն պահանջող գործողությունների համալիր: Լոտը գնահատելու և մեկնարկային գինը սահմանելու Օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված գործողություններն իրարից անջատ գնահատելու դեպքում խեղաթուրվում է այդ նորմով օրենսդրի հետապնդած նպատակը: Իրավանորմերի նման նեղ մեկնաբանության դեպքում ստացվում է մի իրավիճակ, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդների դեպքում լոտի մեկնարկային գինը սահմանելու հարցում հարկադիր կատարողի պարտականությունները սահմանափակվում են լոտի արժեքը գնահատելու և դրա մեկնարկային գինը գնահատված գնի 75 տոկոսի չափով սահմանելու գործողություններով: Մինչդեռ Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված գործողությունների արդյունքում ընդամենը սահմանվում է աճուրդի դրված լոտի մեկնարկային նվազագույն գինը՝ կողմերի համար որոշակի դարձնելով գնային այն շեմը, որից ավելի բարձր գին իրենք կարող են առաջարկել: Օրենքի 35.1-րդ հոդվածի 5-րդ մասը նեղ մեկնաբանելու և հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ Օրենքի 30-րդ հոդվածի միայն 1-ին և 2-րդ մասերը կիրառելի համարելու պայմաններում կատարվի, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդների ժամանակ հարկադիր կատարողը չի կրում նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդ անցկացնելու մասին որոշում ընդունելու պարտականություն, քանի որ վերջինիս համար այդպիսի պարտականություն սահմանված է

Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասով, որոնց Օրենքի 35.1-րդ հոդվածում ուղիղ հղում արված չէ: Մակայն հարկադիր կատարողը պարտավոր է ոչ միայն հարկադիր էլեկտրոնային աճուրդ անցկացնելու մասին որոշում ընդունել՝ Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, այլև Օրենքի 35.1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ որոշման մասին պատշաճ ծանուցել պարտապանին և պահանջատիրոջը, և սահմանված ժամկետում և կարգով կատարել հրապարակային ծանուցում: Հարկ է նշել, որ վկայակոչված՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացման ենթակա լինելու դեպքում գույքի վերաբերյալ որոշումն ընդունելու ժամկետների վերաբերյալ կանոն, այն է՝ պարտապանի գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացման ենթակա լինելու դեպքում դրա վերաբերյալ որոշումը կայացվում է գույքի գնահատումից հետո՝ եռօրյա ժամկետում:

Շարադրվածից բխում է, որ Օրենքի 30-րդ հոդվածն ամբողջացնում է 35.1-րդ հոդվածը՝ դրանում սահմանված ընդհանուր կանոններով կարգավորելով նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդի կազմակերպման կարգը:

Ուստի Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդը, լինելով հարկադիր աճուրդի տեսակ, հատուկ կանոններով չկարգավորվելու կամ ընդհանուր կանոնից բացառություն չնախատեսելու դեպքերում կարգավորվում է հարկադիր աճուրդի իրականացման և կազմակերպման կարգը սահմանող ընդհանուր կանոններով, քանի որ հարկադիր էլեկտրոնային աճուրդի հանված լուրը գնահատելու և մեկնարկային գին որոշելու հատուկ կանոններ նախատեսված չեն, իսկ այդ հարցերը կարգավորող իրավանքներից որևէ բացառություն նախատեսված չէ հարկադիր էլեկտրոնային աճուրդի համար: Հետևաբար՝ Օրենքի 30-րդ հոդվածով սահմանված գործողությունները՝ տրամաբանական հաջորդականությամբ, կիրառելի են նաև հարկադիր էլեկտրոնային աճուրդների նկատմամբ»:

Ամփոփելով վերոգրյալը՝ եզրահանգում ենք, որ հարկադիր էլեկտրոնային աճուրդների կազմակերպման շրջանակներում հարկադիր կատարողի համապատասխան որոշումներն ու ծանուցումները հասցեատերերին պատշաճ չհանձնելու հետ կապված խնդիրները հանգեցնում են թե՛ պարտապանի իրավունքների խախտմանը և թե՛ պահանջատիրոջ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտմանը՝ համապատասխան որոշումները դատարանի կողմից անվավեր ճանաչելու հանգամանքով պայմանավորված:

### *ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

**Վերոգրյալ խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է** ապահովել հարկադիր էլեկտրոնային աճուրդների կազմակերպման և անցկացման շրջանակներում հարկադիր կատարողի համապատասխան որոշումներն ու ծանուցումները հասցեատերերին պատշաճ հանձնելու ընթացակարգերը, ինչպես նաև սահմանել արդյունավետ վերահսկողական մեխանիզմներ:

#### ԲԱԺԻՆ 4

Օրինական ուժի մեջ մտած ակտերի կամավոր կատարման ընթացակարգերի և կատարողական թերթի պահանջները չկատարելու համար սահմանված պատասխանատվության արդյունավետությանն առնչվող խնդիրներ

*ԽՆԴԻՐ*

---

*Օրինական ուժի մեջ մտած ակտերի կամավոր կատարման ընթացակարգերին առնչվող խնդիրներ*

---

*ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*



Դատական և այլ ակտերի կամավոր կատարումը խրախուսելուն ուղղված հատուկ միջոցների սահմանման նպատակահարմարության վերաբերյալ Ծառայությունը դիրքորոշում է հայտնել՝ արձանագրելով, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 09.07.2019 թ. -ին ընդունված թիվ ՀՕ-126-Ն օրենքի հիման վրա «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվել է, որ կատարողական թերթ տրամադրվում է դիմումն ստանալու օրվան հաջորդող երկշաբաթյա ժամկետի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում: Այսպիսով, պարտապանի համար նախատեսվել է լրացուցիչ հնարավորություն և երաշխիք՝ պարտավորությունը կամովին կատարելու և լրացուցիչ ծախսերից՝ ի դեմս կատարողական գործողությունների կատարման ծախսերի, խուսափելու համար: Ծառայությունն արձանագրել է նաև, որ կատարողական վարույթ հարուցելուց հետո կամովին կատարման հնարավորություն ընձեռելը, օրինակ՝ որոշ ժամանակ արգելանքներ չկիրառելու կամ բռնագանձում չտարածելու միջոցով, ահռելի ռիսկեր է պարունակում:

Գտնում ենք, որ պարտապանի կողմից կատարողական թերթի կամ վարչական ակտի պահանջները կամովին կատարելու հնարավորություն ընձեռելը չպետք է որևէ կերպ բացառի Ծառայության կողմից արգելանք կիրառելու գործողությունները, այլ պետք է նպատակ հետապնդի որոշակի կատարողական ծախսեր չգանձելու դիմաց խրախուսել պարտապանին սեղմ ժամկետներում կատարել իր վրա դրված պարտականությունը՝ դրանով իսկ նպաստելով կատարողական վարույթի արագացմանը:

Մեր գնահատմամբ՝ ներկայումս առկա չէ մինչև պահանջատիրոջը դատարանի կողմից կատարողական թերթ տալու ժամանակահատվածը պարտապանի կողմից վճռի կամավոր կատարելու հնարավորության վերաբերյալ իրազեկելու բավարար երաշխիք:

Մասնավորապես ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերը սահմանում են դատական ակտում պարտադիր նշում՝ վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն պարտապանի հաշվին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով կատարելու մասին<sup>27</sup>:

Այնուամենայնիվ, այս նշումը չի պարունակում պարտապանի կողմից վճիռը կամավոր կատարելու համար սահմանված առավելագույն ժամկետի վերաբերյալ տեղեկատվություն՝ կամովին կատարելու ժամկետը պարտապանի համար դարձնելով ոչ կանխատեսելի:

Ավելին, Օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետը չի հիշատակվում որպես վճռի կամավոր կատարման համար նախատեսված ժամկետ, նման եզրահանգման հնարավորություն պարտապանի համար չի ընձեռվում նաև կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ պարտատիրոջից ստացած դիմումը (այն պարտապանին ուղարկելը օրենքի պահանջ է): Պարտապանը նաև փաստացի չի իրազեկվում հարկադիր կատարման վարույթում գանձման ենթակա կատարողական ծախսերի չափի վերաբերյալ:

<sup>27</sup> Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 192, 5-րդ մաս, 4-րդ կետ և ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, հոդված 126, 5-րդ մաս, 4-րդ կետ:

Ներպետական օրենսդրությունը չի նախատեսում նաև հարկադիր կատարման ծախսերը չհաշվարկելու կամ նվազագույն չափով հաշվարկելու պայմանով վճռի կատարման խրախուսման մեխանիզմ, որն առկա է մի շարք պետություններում<sup>28</sup> և սահմանված է Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի՝ Հարկադիր կատարման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի գործող հանձնարարականի արդյունավետ իրականացման վերաբերյալ ուղեցույցով (CEPEJ Ուղեցույց)<sup>29</sup>:

Հաշվի առնելով ՀՀ-ում առկա կատարողական վարույթների ժամանակատարության հետ կապված խնդիրները, որոնք մի շարք դեպքերում հանգեցրել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտմանը, գտնում ենք, որ օրենսդրությամբ պետք է սահմանվեն պարտապանի կողմից իր վրա դրված պարտականությունը սեղմ ժամկետներում կամավոր կատարելու խրախուսմանն ուղղված արդյունավետ միջոցներ:

### *ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

#### **Վերոգրյալ խնդրի լուծման նպատակով առաջարկվում է.**

1. Կատարողական վարույթի հարուցումից հետո օրենսդրությամբ սահմանել պարտապանի վրա դրված պարտականությունը կամավոր կատարելու ժամկետ, ինչպես նաև պարտապանին այդ մասին հարկադիր կատարողի կողմից պատշաճ ծանուցելու պարտականություն:
2. Որպես 1-ին կետով սահմանված առաջարկի այլընտրանք՝ կատարման ենթակա ակտով նախատեսել պարտապանի կողմից ակտի պահանջները կամովին կատարելու հստակ ժամկետի և չկատարման դեպքում վրա հասնող իրավական հետևանքների (այդ թվում՝ կատարողական ծախսերի չափերի, ինչպես նաև հնարավոր իրավական պատասխանատվության միջոցների) մասին ծանուցում:
3. Ակտերի առավել արդյունավետ և ժամանակին կատարումն ապահովելու նպատակով սահմանել հարկադիր կատարման ծախսերը նվազեցնելուն ուղղված խրախուսման միջոցներ (օրինակ՝ գանձելով միայն կամավոր կատարման դրությամբ փաստացի կատարված կատարողական գործողությունների ծախսերը):

### *ԽՆԴԻՐ*

---

*Օրենսդրությամբ սահմանված իրավական պատասխանատվության և դրա կիրառման*  
<sup>28</sup> Ակտերի կամավոր կատարման և հարկադիր կատարման ծախսերի մասին նախագգուշացումն այս կամ այն կերպ ամրագրված է Բելգիայի, Եգիպտոսի, Իսպանիայի, Իտալիայի, Լեհաստանի, Լիտվայի, Լուքսեմբուրգի, Վրաստանի և այլ երկրների օրենսդրությամբ: Օրինակ՝ «Կատարողական վարույթի» մասին Էստոնիայի Հանրապետության օրենսգիրքը սահմանում է, որ կատարման մասին ծանուցումը, ի թիվս այլոց, բովանդակում է տեղեկություն պարտապանի իրավունքի մասին՝ վճարելու միայն կատարողական վարույթ հարուցելու համար վճարը, եթե նա կատարում է կատարողական գրաստությունը գանձելու պարտականությունը անհաջողակ կամ անվճարակալ ժամկետում:

<sup>29</sup> EUROPEAN COMMISSION ON THE EFFICIENCY OF JUSTICE (CEPEJ). GUIDELINES FOR A BETTER IMPLEMENTATION OF THE EXISTING COUNCIL OF EUROPE'S RECOMMENDATION ON ENFORCEMENT, available at <https://rm.coe.int/16807473cd>. «19. Notification in all cases should encourage the defendant to comply with the court order voluntarily and include a warning that in case of non-compliance enforcement measures could be used, including, if appropriate, further costs may be applied.».

## ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ օրենսդրությամբ դատական և այլ ակտերով սահմանված պահանջների կատարումը երաշխավորելու համար նախատեսված են հետևյալ պատասխանատվության միջոցները.

1. Հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելը (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, հոդված 206<sup>5</sup>):
2. Օրինական ուժի մեջ մտած դատավճիռը, վճիռը կամ դատական այլ ակտը (բացառությամբ գումարի բռնագանձման պահանջի և քաղաքացիաիրավական պայմանագրերից բխող պարտավորությունների) այդ ակտերում սահմանված ժամկետներում, իսկ ժամկետներ սահմանված չլինելու դեպքում այդ ակտերն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, քաղաքացիների կողմից դիտավորությամբ չկատարելը (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, հոդված 206<sup>9</sup>):
3. Դատական ակտը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց, կազմակերպությունների պաշտոնատար անձանց, քաղաքացու (նույն արարքի համար վարչական տույժ նշանակելուց հետո) կողմից դիտավորությամբ չկատարելը, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածով:
4. Հայտարարագրում տվյալներ թաքցնելու կամ դրանք խեղաթյուրելու կամ հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելու դեպքերում քրեական պատասխանատվությունը, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 345<sup>1</sup>-րդ հոդվածով:

Անդրադառնալով հիշատակված վարչական պատասխանատվության միջոցներին, հարկ է արձանագրել, որ դրանք կարող են կիրառվել միայն վարչական դատավարության ընթացակարգով: Այսպես, հարկադիր կատարողը, արձանագրելով հարկադիր կատարողի՝ օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը դիտավորյալ խոչընդոտելու (ՎԻՎՕ 206<sup>5</sup>) կամ օրինական ուժի մեջ մտած ակտը՝ սահմանված ժամկետում քաղաքացու կողմից դիտավորությամբ չկատարելու հանգամանքը (ՎԻՎՕ 206<sup>9</sup>), հայցով կարող է դիմել ՀՀ վարչական դատարան, պահանջելով պատասխանատվության ենթարկել տվյալ անձին: Ընդ որում, նշված պահանջը քննվում է ընդհանուր կարգով, անձին կատարողական վարույթի շրջանակում պատասխանատվության ենթարկելու պահանջի քննության համար հատուկ սեղմ ժամկետներ նախատեսված չեն: Գտնում ենք, որ անձին պատասխանատվության ենթարկելու նպատակն է օրինական ուժի մեջ մտած ակտի կատարման ապահովումը, որին ուղղված կատարողական գործողությունների իրականացման համար Օրենքով սահմանված է երկամսյա ժամկետ (այն Հայաստանի Հանրապետության գլխավոր հարկադիր կատարողի կողմից կարող է երկարաձգել մինչև 2 ամիս ժամկետով՝ հարկադիր կատարման ծառայության մարզային (Երևանի քաղաքային) բաժնի պետի միջնորդությամբ): Միաժամանակ, ուսումնասիրելով Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով 2022թ. քննված

դատական գործերը, փաստում ենք, որ այս գործերով առաջին դատական նիստերը նշանակվում են հայցը վարույթ ընդունելուց հետո միջինում երեք ամիս անց: Հաշվի առնելով այս ընթացակարգի տևականությունը և բարդությունը՝ գտնում ենք, որ այն չի կարող արդյունավետ համարվել որպես դատական ակտերի հարկադիր կատարումը ողջամիտ ժամկետում ապահովելու միջոց:

Կատարողական վարույթի արդյունավետությունը բարձրացնելու, դատական ակտերի կատարման ժամկետները կրճատելու նպատակով անհրաժեշտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 206<sup>9</sup>-րդ և 206<sup>5</sup>-րդ հոդվածներով սահմանված զանցանքներով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը վերապահել Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը: ՀՀ Սահմանադրական դատարանի 2021 թվականի փետրվարի 23-ի թիվ ՄԴՈ-1578 որոշմամբ արդեն իսկ արձանագրվել է, որ ինչպես վարչական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը դատարանին վերապահելը, այնպես էլ համապատասխան օրենսդրական փոփոխություններով դատարանի նման լիազորության դադարեցումը Սահմանադրության 88-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված օրենսդիր իշխանության իրավազորության տիրույթում են: Հիշյալ որոշմամբ արձանագրվել է, որ վարչական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը դատարանին վերապահելը կամ արդեն իսկ գոյություն ունեցող նման լիազորության դադարեցնել չի հանգեցնում սահմանադրական որևէ սկզբունքի կամ իրավունքի խախտման, և այդ ընտրությունը լիովին համատեղելի է Սահմանադրության 88-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ օրենսդիր իշխանության իրականացման համար Ազգային ժողովին վերապահված հայեցողության սահմանների հետ<sup>30</sup>:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված պատասխանատվությանը, ապա արձանագրենք, որ ՀՀ ոստիկանության շտաբի հայտնած տվյալների համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածի 1-ին մասի (դատական ակտը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց կողմից դիտավորությամբ չկատարելը) հատկանիշներով 2016-2021 թթ. ներառյալ հանցագործությունների վերաբերյալ գրանցվել է 34 տվյալ, յուրաքանչյուր տարի համապատասխանաբար՝ 3, 2, 4, 8, 11 և 6 դեպք, իսկ 2022թ. -ի 1-ին եռամսյակի ընթացքում՝ 5 դեպք, որոնցով հարուցված քրեական գործերը գտնվում են նախաքննության փուլում:

Վկայակոչված սակավաթիվ տվյալները վկայում են այն մասին, որ առկա է նշված հիմքով հաղորդումներ ներկայացնելու իրավակիրառ պրակտիկայի, ինչպես նաև ընդհանուր առմամբ քրեական պատասխանատվության համակարգի արդյունավետության խնդիր: Հետևաբար, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց համար տվյալ դեպքում միայն քրեական պատասխանատվության սահմանումը չի կարող լիարժեք և արդյունավետ միջոց համարվել դատական ակտերի կատարումն ապահովելու կամ չկատարումը կանխելու տեսանկյունից: Գտնում ենք, որ անհրաժեշտ է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանել նախ վարչական

<sup>30</sup> Մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վերլուծություն. Արդար դատաքննության իրավունք. Հայաստան (ԻԶՊՀ), հասանելի է <https://ldpf.am/uploads/files/59289151898691dac953da9dc78366af.pdf>:

պատասխանատվություն վերագրյալ սուբյեկտների կողմից դատական ակտը չկատարելու համար, իսկ քրեական պատասխանատվությունը պայմանավորել նույն արարքի համար վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում դատական ակտը դիտավորյալ չկատարելու հանգամանքով: Նշված առաջարկությունը պայմանավորված է սահմանված քրեական պատասխանատվության կիրառման պրակտիկայի գրեթե բացակայությամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 345<sup>1</sup>-րդ հոդվածի համաձայն՝ պարտապանի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի և գույքային իրավունքների կազմի, քանակի և գտնվելու վայրի մասին հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելը, երբ հայտարարագիր տալը պարտադիր է, ինչպես նաև հայտարարագրում գույքի և գույքային իրավունքների կազմի, քանակի և գտնվելու վայրի վերաբերյալ ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելը կամ դրանք թաքցնելը, որոնք հանգեցրել են խոշոր չափերի պարտավորության հարկադիր կատարման անհնարինության՝ պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով: Հոդվածով խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը գերազանցող գումարը (արժեքը):

Այսպիսով, թաքցված (չհայտարարագրված) գույքը պետք է 500.000 ՀՀ դրամը գերազանցող պարտավորության կատարման անհնարինության հանգեցնի՝ պատասխանատվության ենթարկելու պայմանը բավարարելու համար: Նշված չափը չգերազանցելու դեպքում՝ իրավական պատասխանատվության որևէ միջոց նախատեսված չէ:

Գտնում ենք, որ անհրաժեշտ է նշված արարքի համար սահմանել վարչական պատասխանատվություն բոլոր այն դեպքերում, երբ տվյալ արարքը չի պարունակում ՀՀ քրեական օրենսգրքի 345<sup>1</sup>-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ:

Հատկանշական է նաև, որ ՀՀ ոստիկանության հայտնած տվյալների համաձայն, 2021թ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 345.1-րդ հոդվածով նախատեսված հանցագործության դեպք չի գրանցվել, իսկ 2022թ. 1-ին եռամսյակի ընթացքում արձանագրված 1 դեպքով հարուցված քրեական գործով վարույթը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով (մեղադրյալը թաքնվել է քննությունից կամ դատից, կամ նրա գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չէ):

## ***ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ***

### **Վերագրյալ խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է.**

1. Վերանայել հարկադիր կատարողի կողմից վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով դատարան դիմելու ընթացակարգը՝ անմիջականորեն հարկադիր կատարողին վերապահելով վարչական տույժ կիրառելու լիազորություն:
2. Օրինական ուժի մեջ մտած դատական ակտը դիտավորյալ չկատարելու համար պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց համար սահմանել վարչական պատասխանատվություն, իսկ քրեական

պատասխանատվությունը պայմանավորել նույն արարքի համար վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում դատական ակտը դիտավորյալ չկատարելու հանգամանքով:

3. Սահմանել վարչական պատասխանատվություն՝ հայտարարագրում տվյալներ թաքցնելու կամ դրանք խեղաթյուրելու կամ հայտարարագիր ներկայացնելուց չարամտորեն խուսափելու համար, եթե տվյալ արարքը չի պարունակում ՀՀ քրեական օրենսգրքի 345<sup>1</sup>-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ:

## ԲԱԺԻՆ 5

### Կատարողական ծախսերին և բռնագանձված գումարի բաշխմանն առնչվող խնդիրներ

#### *ԽՆԴԻՐ*

---

*Կատարողական ծախսերի հաշվարկման ոչ տարբերակված համակարգի և բռնագանձված գումարի բաշխման հերթականության իրավաչափության հետ կապված խնդիրներ*

---

#### *ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

Օրենքի 67-րդ հոդվածի համաձայն՝

1. Կատարողական գործողությունները կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին:
2. Կատարողական գործողությունների կատարման ծախսերը բռնագանձվում են պարտապանից՝

ա) գույքային բնույթի կատարողական վարույթներով՝ 100.000 դրամ և ավելի չափով պահանջի բավարարմանն ուղղված գումարի, իսկ գույք հանձնելու դեպքում՝ այդ գույքի արժեքի 5 տոկոսի չափով.

բ) 10.000 դրամից մինչև 100.000 դրամ պահանջի բավարարմանն ուղղված գույքային բնույթի կատարողական վարույթներով և ոչ գույքային բնույթի կատարողական վարույթներով՝ 5.000 դրամի չափով.

գ) մինչև 10.000 դրամ պահանջի բավարարմանն ուղղված գույքային բնույթի կատարողական վարույթներով՝ բռնագանձվող գումարի 50 տոկոսի չափով:

Այլմենտային, աշխատավարձի բռնագանձման և կյանքին ու առողջությանը պատճառված վնասի հատուցման վերաբերյալ կատարողական վարույթներով կատարման ծախսեր չեն գանձվում:

Ինչպես տեսնում ենք, գույքային բնույթի կատարողական վարույթներով գանձվում է 100.000 դրամ և ավելի չափով պահանջի բավարարմանն ուղղված գումարի, իսկ գույք հանձնելու դեպքում՝ այդ գույքի արժեքի 5 տոկոսի չափով կատարման ծախս, որի համար հիմք է ընդունվում բացառապես բռնագանձված գումարի չափը կամ հանձնվող գույքի արժեքը: Սահմանված չափը որևէ կերպ պայմանավորված չէ կատարողական վարույթի փուլի, ինչպես նաև փաստացի կատարված գործողությունների ծավալի հետ: Հաշվի առնված չէ նաև անձի գույքային դրությունը և սոցիալական կարգավիճակը: Ավելին, այս կարգավորումը որևէ կերպ չի խրախուսում պարտապանի կողմից իր վրա դրված պարտականությունների կամավոր և հնարավոր սեղմ ժամկետներում կատարումը՝ անհամաչափ կերպով սահմանափակելով նաև պահանջատիրոջ իրավունքները, քանի որ պարունակում է դատական ակտը ոչ լրիվ ծավալով կատարելու ռիսկեր (բռնագանձված գումարի անբավարարության դեպքում):

Հարկ է նշել, որ ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թթ. ռազմավարության նախագծով նախատեսվում է կատարողական ծախսերի տարբերակված դրսևորումների ամրագրում, որի անհրաժեշտությունը հիմնավորվում է նրանով, որ առկա կառուցակարգի պայմաններում գերակայում են այնպիսի իրավիճակները, երբ բռնագանձման ենթակա կատարողական ծախսը ակնհայտորեն գերազանցում է հարկադիր կատարողի կատարած գործողությունների ծավալը և բարդությունը, և հակառակը՝ կատարված մեծածավալ աշխատանքի դիմաց վճարվում է ակնհայտորեն նվազ կատարողական ծախս՝ ելնելով բռնագանձվող գումարից<sup>31</sup>:

Օրենքի 69-րդ հոդվածով սահմանվում է բռնագանձված գումարի բաշխման կարգը: Պարտապանից բռնագանձված, այդ թվում՝ պարտապանի գույքի իրացումից, ինչպես նաև բռնագրավման ենթակա գույքի արժեքից ստացված գումարները մեկից ավելի պահանջատերերի դեպքում բաշխվում են հետևյալ հերթականությամբ.

- առաջին հերթին բավարարվում են պարտապանի գույքի գրավով ապահովված պահանջները,

<sup>31</sup> Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարության նախագիծը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.e-draft.am/projects/4092/about>:

- երկրորդ հերթին բավարարվում են դատական և կատարողական ծախսերը,
- երրորդ հերթին վճարվում է հարկադիր կատարման ընթացքում պարտապանի նկատմամբ կիրառված տուգանքի գումարը,
- չորրորդ հերթին բավարարվում են ալիմենտային, կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման, ինչպես նաև հանցագործության կատարմամբ պատճառված վնասը հատուցելու պարտավորություններով պահանջները,
- հինգերորդ հերթին բավարարվում են աշխատանքային և հեղինակային պայմանագրերով վարձատրությունների վճարումների և դրանց բավարարումից առաջացող պարտադիր սոցիալական վճարումների պահանջները,
- վեցերորդ հերթին բավարարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ, ինչպես նաև պարտադիր պետական սոցիալական ապահովության վճարումներով պայմանավորված պարտավորությունները,
- յոթերորդ հերթին բավարարվում են մնացած պահանջատերերի պահանջները՝ ըստ կատարողական թերթի ներկայացման հերթականության, բացառությամբ նույն հոդվածով նախատեսված դեպքերի:

Նշված կարգավորմամբ ալիմենտային, կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման, ինչպես նաև հանցագործության կատարմամբ պատճառված վնասը հատուցելու պարտավորություններով պահանջները, ինչպես նաև պահանջատերերի այլ պահանջները ստորադասվում են կատարողական ծախսերին, հարկադիր կատարման ընթացքում պարտապանի նկատմամբ կիրառված տուգանքի գումարներին: Մինևույն ժամանակ յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո:

Այսպիսով, նույն պարտապանի նկատմամբ մի քանի կատարողական վարույթների առկայության դեպքում, առնվազն ոչ գույքային բնույթի պահանջներով կատարողական վարույթներով կատարողական ծախսերը (այդ թվում՝ սահմանված ժամկետում այդ պահանջները պարտապանի կողմից չկատարելու դեպքում՝ Ծառայության կողմից կատարվելու դեպքում փաստացի կատարված կատարման ծախսերի եռապատիկը), ինչպես նաև նրա նկատմամբ այլ վարույթներով կիրառված դրամական տուգանքների գումարները գանձվում են առաջնահերթության կարգով: Որպես հետևանք, բռնագանձված գումարի անբավարարության պարագայում հնարավոր է, որ չորրորդ հերթով սահմանված ալիմենտային, կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման, ինչպես նաև հանցագործության կատարմամբ պատճառված վնասը հատուցելու պարտավորություններով պահանջների բավարարումը հնարավոր չլինի ապահովել առհասարակ կամ առնվազն ամբողջ ծավալով:

Նույն տրամաբանությամբ վերոգրյալ կատարողական ծախսերի (ինչպես նաև գույքային բնույթի կատարողական վարույթներով՝ 100.000 դրամ և ավելի չափով պահանջի բավարարմանն ուղղված գումարի, իսկ գույք հանձնելու դեպքում՝ այդ գույքի արժեքի 5 տոկոսի չափով ծախսերի<sup>32</sup>) և տուգանքների գումարների գանձումը պահանջատիրոջ

<sup>32</sup> Սա ենթադրում է փաստացի բռնագանձված գումարից 5 տոկոսի չափով կատարողական ծախսերի գանձում:



պահանջներից առաջ, դրամական միջոցների անբավարարության պարագայում, կարող է հանգեցնել այլ պահանջներով դատական ակտի ոչ լրիվ ծավալով կատարմանը կամ կատարման անհնարինությունը<sup>33</sup> (նշված պահանջները նախատեսված են վերջին հերթում), ինչը հակասում է ՀՀ Սահմանադրության և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված պահանջներին:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Սահմանադրության 61-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: 63-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Այսպիսով, ֆիզիկական և իրավաբանական անձանց խախտված իրավունքների պաշտպանությունը հանդիսանում է պետության սահմանադրական պարտականությունը, որից ուղղակիորեն բխում է ոչ միայն խախտված իրավունքների պաշտպանությանն ուղղված արդյունավետ դատական և իրավական պաշտպանության այլ մեխանիզմների համակարգի ստեղծման և գործունեության ապահովման պարտականությունը, այլև այդ համակարգի շրջանակներում կայացված դատական և այլ ակտերի կատարման ապահովման պարտականությունը:

Այս պարտականությունը անմիջականորեն բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածից. Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով որևէ դատարանի կողմից կայացված վճռի կատարումը պետք է դիտարկվի որպես դատական քննության անբաժանելի մաս<sup>34</sup>: Եթե Պայմանավորվող պետության ներպետական իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական դատական ակտը մնար անկատար՝ ի վնաս կողմերից մեկի, արդար դատաքննության իրավունքը կդառնար պատրանքային:

Մինչդեռ սույն դեպքում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված բռնագանձված գումարի բաշխման կարգն ինքնին ստեղծում է դատական ակտի կատարման կամ լրիվ ծավալով կատարման անհնարինություն՝ առաջնահերթությունը տալով պարտատիրոջ հաշվին<sup>35</sup> կատարողական ծախսերի, նշանակված տուգանքների բռնագանձմանը:

Հարկ ենք համարում այս համատեքստում անդրադառնալ նաև ՌԴ սահմանադրական դատարանի 30.07.2001 թվականի թիվ 13-Պ որոշմանը, որով համանման

<sup>33</sup> Հաշվի առնելով նաև ոչ գույքային բնույթի պահանջներով կատարողական վարույթներով նշանակված տուգանքների գանձման առաջնահերթությունը:

<sup>34</sup> *Տե՛ս Հորնսբին ընդդեմ Հունաստանի* [Hornsby v. Greece], 1997 թվականի մարտի 19, § 40, *Վճիռների և որոշումների մասին զեկույցներ* 1997-II, և *Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի* [Burdov v. Russia], թիվ 59498/00, § 34, ՄԻԵԴ 2002-III):

<sup>35</sup> Բռնագանձված գումարի անբավարարության պարագայում

իրավակարգավորումը<sup>36</sup> ճանաչվել է հակասահմանադրական, որոշմամբ կարգավորումը գնահատվել է որպես հանրային և մասնավոր շահերի արդարացի հավասարակշռության խախտում հարկադիր կատարման փուլում<sup>37</sup>:

### *ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

**Վերոգրյալ խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է.**

1. Օրենքով սահմանված կատարողական ծախսերի չափերը պայմանավորել կատարողական վարույթի փուլի, ինչպես նաև փաստացի կատարված գործողությունների ծավալի հետ՝ դրանով իսկ ապահովելով նաև սեղմ ժամկետներում պարտապանի կողմից իր վրա դրված պարտականությունների կատարման խրախուսումը, սահմանել կատարողական ծախսերի գանձման առավելագույն շեմեր: Սահմանել անձի սոցիալական կարգավիճակով և գույքային դրությամբ պայմանավորված արտոնություններ՝ կատարողական ծախսերի գծով:

2. Փոփոխել բռնագանձված գումարի բաշխման Օրենքով սահմանված հերթականությունը՝ սահմանելով պահանջատիրոջ պահանջների բավարարման առաջնահերթությունը՝ կատարողական ծախսերի և կիրառված տուգանքների փոխարեն:

---

<sup>36</sup> Որոշակի վերապահումներով (բռնագանձման ենթակա գումարի 7 տոկոսը փաստացի հանդիսանում է դրամական տույժ ակտը սահմանված ժամկետում կամովին չկատարելու համար):

<sup>37</sup> Конституционный Суд Российской Федерации, Постановление от 30 июля 2001 г. п 13-п по делу о проверке конституционности положений подпункта 7 пункта 1 статьи 7, пункта 1 статьи 77 и пункта 1 статьи 81 федерального закона "Об Исполнительном Производстве" в связи с запросами арбитражного суда Воронежской области, арбитражного суда Саратовской области и жалобой открытого акционерного общества "Разрез "Изыхский", <https://bit.ly/39rzXzF>.

## ԲԱԺԻՆ 6

### Դատական ակտերի չկատարման կամ ձգձգումներով կատարման հետևանքով հասցված վնասի հատուցմանն առնչվող խնդիրներ

#### *ԽՆԴԻՐ*

---

*Դատական ակտերի չկատարման կամ ձգձգումներով կատարման հետևանքով հասցված վնասի հատուցման ընթացակարգի ոչ իրավաչափությանն առնչվող խնդիրներ*

---

#### *ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

Ավաքեմյանն ընդդեմ Հայաստանի (39563/09, 03.10.2017 թ.)<sup>38</sup>, Նիկողոսյանն ընդդեմ Հայաստանի (75651/11, 04.10.2019 թ.)<sup>39</sup>, Դնգիկյանն ընդդեմ Հայաստանի (66328/12, 30.11.2020 թ.)<sup>40</sup>, Ֆիդանյանն ընդդեմ Հայաստանի (62904/12, 04.10.2019 թ.)<sup>41</sup>, Պապոյանն ընդդեմ

---

<sup>38</sup> Ավաքեմյանն ընդդեմ Հայաստանի գործով (զանգատ թիվ 39563/09, 2017 թ. մարտի 30), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-172361>:

<sup>39</sup> Նիկողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով (զանգատ թիվ 75651/11, 2019 թ. մայիսի 18), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-173500>:

<sup>40</sup> Դնգիկյանն ընդդեմ Հայաստանի գործով (զանգատ թիվ 66328/12, 2017 թ. հունիսի 15), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-174418>:

<sup>41</sup> Ֆիդանյանն ընդդեմ Հայաստանի գործով (զանգատ թիվ 62904/12, 2018 թ. հունվարի 11), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-179861>:

Հայաստանի (7205/11)<sup>42</sup>, Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի (31761/04, 01.12.2009 թ.)<sup>43</sup> գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում՝ դիմումատուների օգտին կայացված դատական ակտերը չկատարելու կամ ձգձգումներով կատարելու հիմքով: *Ավաքեմյանն ընդդեմ Հայաստանի* գործով արձանագրվել է նաև Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում՝ կատարողական վարույթներն արագացնելու կամ դրանց ձգձգման հետևանքով առաջացած ցանկացած վնասի մասով փոխհատուցում ստանալու համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի բացակայության հիմքով:

ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

Ներպետական օրենսդրությամբ կատարողական վարույթների ձգձգման կամ դատական ակտի չկատարման դեպքերում առկա փոխհատուցման մեխանիզմները գնահատելու համար հարկ ենք համարում անդրադառնալ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածով սահմանված՝ ոչ նյութական վնասի հատուցմանն առնչվող կարգավորումներին: Նշված հոդվածով սահմանվում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով անձի հիմնարար իրավունքների (այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքի) խախտման դեպքում ոչ նյութական վնասի հատուցում ստանալու իրավունք: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ նաև Օրենք) սահմանված կարգով: Օրենքի 7-րդ բաժինը սահմանում է վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության վերաբերյալ կարգավորումները, այդ թվում՝ գույքային և ոչ գույքային վնասի փոխհատուցման կարգը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 96-րդ հոդվածի համաձայն՝ վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել, բացառությամբ նույն օրենքի 109-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

<sup>42</sup> Պապոյանն ընդդեմ Հայաստանի գործով (զանգատ թիվ 7205/11, 2018 թ. հունվարի 11), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-179854>:

<sup>43</sup> Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի գործով (զանգատ թիվ 31761/04, 2009 թ. դեկտեմբերի 1), հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-95905>:

ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0441/02/16 գործով 07.04.2018 թ.-ին կայացրած որոշմամբ<sup>44</sup> արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը ոչ նյութական վնասի հատուցման ընթացակարգի վերաբերյալ. «... ընդհանուր կանոնի համաձայն՝ ոչ նյութական վնասի հատուցումը տեղի է ունենում դատական կարգով: Այլ կերպ ասած, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պահանջով շահագրգիռ անձը, որպես ընդհանուր կանոն, կարող է անմիջապես դիմել դատարան: Մինևույն ժամանակ օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 5-րդ մասում այդ ընդհանուր կանոնից կատարել է բացառություն (...): Եթե ոչ նյութական վնասը պատճառվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով, ապա այդ դեպքում կիրառվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված վարչական մարմինների և մասնավոր անձանց միջև ծագող հարաբերությունները կարգավորող կանոնները»:

Նույն որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը հղում է կատարել իր ձևավորած կայուն նախադեպային դիրքորոշմանը, որի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով անհրաժեշտ է, որ առաջին հերթին ոչ իրավաչափ ճանաչված լինի անձին վնաս հասցրած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը: Դրանից հետո միայն անձը պարտավոր է ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով նախ դիմել վնասը պատճառած վարչական մարմնին, որի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չբնակարկելու դեպքում կարող է վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկել վերադատության կամ դատական կարգով:

Ամփոփելով վերոշարադրյալ իրավական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման իրավունքը կենսագործվում է հետևյալ ընթացակարգով.

- 1) նախ և առաջ ոչ նյութական վնաս պատճառած պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործողությունը, անգործությունը կամ վարչական ակտը պետք է շահագրգիռ անձի դիմումով (վարչական կամ դատական կարգով) ճանաչվի ոչ իրավաչափ,
- 2) այնուհետև շահագրգիռ անձը պետք է դիմի ոչ իրավաչափ գործողություն կատարած կամ ոչ իրավաչափ անգործություն դրսևորած կամ ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունած վարչական մարմնին՝ ոչ նյութական վնասի հատուցման պահանջով,
- 3) ոչ նյութական վնասի հատուցման դիմումի լրիվ կամ մասնակիորեն մերժման դեպքերում շահագրգիռ անձը կարող է վարչական կարգով բողոքարկել այդ դիմումը մերժելու մասին վարչական ակտը կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի միջոցով դիմել Վարչական դատարան՝ ոչ իրավաչափ գործողություն կատարած կամ ոչ իրավաչափ անգործություն դրսևորած կամ ոչ իրավաչափ

<sup>44</sup> Մանրամասն տե՛ս ՀՀՊՏ 2018.07.04/51(1409).1 Հոդ.780.21, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=123646>:

վարչական ակտ ընդունած վարչական մարմնին ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջով,

4) ոչ նյութական վնասի հատուցման դիմումը չքննարկվելու դեպքում գործում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական ֆիլզիայի ինստիտուտը (դրա համար անհրաժեշտ բոլոր պայմանների առկայության պարագայում), որի շրջանակներում շահագրգիռ անձը կարող է հասնել ոչ նյութական վնասի հատուցման իր իրավունքի գործնական իրացմանը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողության կատարման հայցատեսակով Վարչական դատարան դիմելու միջոցով:

Ինչ վերաբերում է գույքային վնասի փոխհատուցմանը, ապա դատական պրակտիկայում վերոնշյալ ընթացակարգը կիրառելի է համարվում ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված նյութական վնասի հատուցման իրավունքի իրացման նկատմամբ<sup>45</sup>:

Արձանագրենք, որ առկա կարգավորումները և դատական պրակտիկան խնդրահարույց են ցանկացած վարչական մարմնի կողմից վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավաչափության տեսանկյունից, սակայն խնդիրն առավել ցայտուն է դառնում դատական ակտերի հարկադիր կատարմանն առնչվող հարաբերություններում: Այս հարցը մանրամասն վերլուծության է ենթարկվել նաև Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վերլուծություն. Արդար դատաքննության իրավունք. Հայաստան» հետազոտությամբ<sup>46</sup>:

Գտնում ենք, որ դատական ակտերի չկատարման կամ ձգձգումներով կատարման հետևանքով հասցված վնասի հատուցման ընթացակարգը, որը ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում բացառում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործողությունների (անգործության, վարչական ակտի) ոչ իրավաչափ ճանաչման շրջանակներում վնասի հատուցման պահանջի միաժամանակյա ներկայացումը, չի ապահովում անձի արդար դատաքննության, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքների իրացումը և չի կարող բավարար համարվել մատնանշված խումբ գործերով կայացված ՄԻԵԴ վճիռներից բխող ընդհանուր միջոցների կիրառման արդյունավետության տեսանկյունից<sup>47</sup>: Կոնվենցիայի 6-րդ հոդվածից ուղղակիորեն բխող դատական ակտի՝ առանց չիմնավորված ձգձգումների կատարման իրավունքի խախտման դեպքում տրամադրվող իրավական պաշտպանության միջոցը չի կարող արդյունավետ համարվել, եթե այն ենթադրում է որևէ իրավաչափ նպատակով չպայմանավորված լրացուցիչ վարչական և դատական ընթացակարգերի սպառման

<sup>45</sup> Տե՛ս թիվ ՎԴ/2986/05/20 գործով ՀՀ Վարչական դատարանի որոշումը հայցադիմումը վերադարձնելու մասին:

<sup>46</sup> Մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վերլուծություն. Արդար դատաքննության իրավունք. Հայաստան (ԻԶՊՀ), հասանելի է <https://ldpf.am/uploads/files/59289151898691dac953da9dc78366af.pdf>:

<sup>47</sup> Ավաքեմյանն ընդդեմ Հայաստանի (39563/09, 03.10.2017 թ.), Նիկողոսյանն ընդդեմ Հայաստանի (75651/11, 04.10.2019 թ.), Դնգիլյանն ընդդեմ Հայաստանի (66328/12, 30.11.2020 թ.), Ֆիդանյանն ընդդեմ Հայաստանի (62904/12, 04.10.2019 թ.), Պապոյանն ընդդեմ Հայաստանի (7205/11), Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի (31761/04, 01.12.2009 թ.)

պահանջ, ինչպես նաև հանգեցնում է անորոշ ժամկետով փոխհատուցման տրամադրման հետաձգմանը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք գործերով արձանագրել է, որ փոխհատուցման համար դիմելու գործընթացում չափից դուրս ձգձգումները համապատասխան իրավական պաշտպանության միջոցը դարձնում են անարդյունավետ (Paulino Tomás v. Portugal (dec.), no. 58698/00, ECHR 2003-VIII; Belinger v. Slovenia (dec.), no. 42320/98, 2 October 2001; Öneriyıldız v. Turkey [GC], no. 48939/99, § 156, ECHR 2004-XII)<sup>48</sup>:

Այս համատեքստում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում թիվ ՎԴ/0587/05/16 վարչական գործը, որով ՀՀ վարչական դատարանի 06.02.2017թ.-ի վճռով (մտել է օրինական ուժի մեջ 30.04.2019թ.) ոչ իրավաչափ է ճանաչվել ՀՀ Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության անգործությունը՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 07.04.2014 թվականին տրված կատարողական թերթի պահանջը չկատարելու կապակցությամբ: Իսկ ոչ իրավաչափ անգործության հետևանքով պատճառված գույքային վնասի բռնագանձման պահանջի մասով հայցադիմումի վարույթ ընդունումը մերժվել էր՝ սահմանված ընթացակարգը չսպառելու հիմքով: Դատական ակտի ուժի մեջ մտնելուց հետո հայցվորը դիմել էր Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված նյութական վնասի հատուցման նպատակով, որը մերժվել է 2020թ. մարտին, դրան հաջորդել էր պատճառված վնասի հատուցում տրամադրելու մասին բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու մասին հայցադիմումի ներկայացումը ՀՀ վարչական դատարան, որը վարույթ է ընդունվել 05.08.2020թ.<sup>49</sup>: Մինչ օրս գործը գտնվում է վարչական դատարանում քննության փուլում, 11.08.2022թ.-ին նշանակված է դատաքննություն: Այսպիսով, վարչարարությամբ պատճառված վնասի փոխհատուցման սահմանված ընթացակարգի հետևանքով Ծառայության դեմ ներկայացված և վնասի փոխհատուցմանն ուղղված սույն գործի քննությունը արդեն իսկ տևել է շուրջ 6.5 տարի (քննության ավարտի ժամկետն անորոշ է):

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ակնհայտ է, որ դատական ակտերի չկատարման կամ ձգձգումներով կատարման հետևանքով հասցված վնասի հատուցման՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգը չի համապատասխանում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին:

Արձանագրենք նաև, որ Ավաքեմյանն ընդդեմ Հայաստանի գործով կայացված վճռով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է նաև, որ դիմումատուն չի ունեցել

<sup>48</sup> CASE OF SCORDINO v. ITALY (No. 1) (Application no. 36813/97), available at <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-72925>

<sup>49</sup> Թիվ ՎԴ/2986/05/20 վարչական գործ

կատարողական վարույթներն արագացնելու համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, ինչը հիմք է հանդիսացել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտման արձանագրման համար: Միննույն ժամանակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի սահմանում կատարողական վարույթի արագացմանը միտված հատուկ իրավակարգավորումներ՝ Վարչական դատարանում գործի քննության շրջանակներում: Օրինակ՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության անգործության դեմ ներկայացված հայցադիմումի հիման վրա հարուցված վարչական գործը կարող է մի քանի տարի քննության առարկա դառնալ դատարաններում՝ հանգեցնելով սույն գործընթացի իմաստագրկմանը:

### *ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

**Վերոգրյալ խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է.**

1. Վերանայել դատական ակտերի չկատարման կամ ձգձգումներով կատարման հետևանքով հասցված նյութական և ոչ նյութական վնասի հատուցման ընթացակարգը՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործողությունների (անգործության, վարչական ակտի) ոչ իրավաչափ ճանաչման պահանջի հետ համատեղ վնասի հատուցման պահանջի ներկայացման հնարավորության սահմանմամբ:
2. Վարչական դատավարության օրենսգրքով սահմանել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործողությունների/անգործության վիճարկմանն առնչվող գործերի քննության հստակ և սեղմ ժամկետներ:



## ԲԱԺԻՆ 7

Դրամական պահանջներին առնչվող դատական ակտերի կատարման խնդիրները պետության՝ որպես պարտապան հանդես գալու գործերով, անժառանգ գույքի բռնագանձման հետ կապված խնդիրներ

### *ԽՆԴԻՐ*

---

*Դատական ակտերով պահանջատիրոջ օգտին ՀՀ պետական բյուջեից դրամական միջոցների բռնագանձման ընթացակարգերի իրավաչափությանն առնչվող խնդիրներ*

---

### *ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Վարչական իրավունքի բնագավառում վարչական և դատական ակտերի կատարման վերաբերյալ թիվ Rec(2003)16 հանձնարարականը գումարի վճարման պարտականություն նախատեսող դատական ակտերի կատարման առնչությամբ սահմանում է հետևյալ պահանջները.

«ա. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ այն դեպքերում, երբ վարչական մարմիններից պահանջվում է կատարել դրամական պարտավորություն, այն կատարվի ողջամիտ ժամկետում:

բ. Դրամական միջոցներ վճարելու պարտականություն ենթադրող դատական ակտերի չկատարման հետ կապված վարչական մարմնի կողմից վճարման ենթակա տոկոսները

չպետք է ավելի ցածր լինեն նույն իրավիճակում վարչական մարմնին ֆիզիկական անձի կողմից վճարման ենթակա տոկոսներից:

գ. Վարչական մարմինը պետք է ապահովված լինի համապատասխան հնարավորություններով՝ այնպիսի իրավիճակներից խուսափելու նպատակով, երբ միջոցների բացակայությունը կլիտչընդոտի գումար վճարելու իր պարտականությունը կատարելուն:

դ. Վարչական մարմինների կողմից դրամական պարտավորություն ենթադրող դատական ակտերի չկատարման դեպքում անդամ պետությունները պետք է դիտարկեն նաև վարչական մարմնի գույքի բռնագանձման հնարավորությունը՝ օրենքով նախատեսված սահմաններում»<sup>50</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ի թիվս այլոց, Մետաքսասն ընդդեմ Հունաստանի<sup>51</sup> գործով կայացված վճռով արձանագրել է պետության դեմ կայացված դատական ակտերով հարկադիր կատարման վարույթների հարուցման պահանջի ոչ իրավաչափությունը: Որոշման կիրարկման բեռը նախևառաջ դրված է պետական մարմինների վրա, որոնք պարտավոր են օգտագործել ներպետական իրավական համակարգով նախատեսված բոլոր միջոցները կատարումն արագացնելու համար՝ դրանով իսկ կանխելով Կոնվենցիայի խախտումները: Եթե վճիռը կայացվել է պետության դեմ, որպես պատասխանող հանդես եկող պետական մարմինը պետք է պատշաճ կարգով տեղեկացված լինի այդ մասին և հետևաբար, կարող է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները այդ վճիռը կատարելու համար կամ փոխանցել այն կատարման համար պատասխանատու այլ իրավասու մարմնի (տե՛ս, անհրաժեշտ փոփոխություններով, վճիռը «Ակաշեն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով», § 21 - 22): Պետությունը չի կարող վկայակոչել դրամական միջոցների բացակայությունը՝ որպես դատական ակտով հաստատված պարտավորությունը չկատարելու արդարացում: Որոշակի ուշացումը կարող է ընդունելի լինել հատուկ հանգամանքներում, սակայն այն չպետք է լինի այն աստիճանի, որ խաթարի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով պաշտպանվող իրավունքի բովանդակությունը: ( *Immobiliare Saffi v. Italy* [GC], no. 22774/93, § 74, ECHR 1999-V).

Հայաստանի Հանրապետության դեմ կայացված դատական ակտերի կամավոր կատարման ընթացակարգի առնչությամբ կատարված հարցադրմանը ՀՀ Կառավարությունը, ի դեմս՝ ՀՀ Արդարադատության նախարարության, հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«... փոխանցվող մուրհակի տրամադրումն էլ, իր բնույթով, ըստ էության, կամովին կատարում է՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Օրենքի 44-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ պետական բյուջեից գումար բռնագանձելու վերաբերյալ կատարողական վարույթներով

<sup>50</sup> Recommendation Rec(2003)16 of the Committee of Ministers to member states on the execution of administrative and judicial decisions in the field of administrative law, available at [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectID=09000016805df14f](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805df14f).

<sup>51</sup> <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-185488>

պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք է կիրառվում բռնագանձման ենթակա գումարի դիմաց օրենքով սահմանված ժամկետում փոխանցելի մուրհակ չտրամադրելու դեպքում»:

Գտնում ենք, սակայն, որ փոխանցելի մուրհակների տրամադրման ընթացակարգը խնդրահարույց է թե որպես պետության կողմից դատական ակտի կամովին կատարումն ապահովելու միջոց դիտարկելու և թե սահմանված ժամկետների տեսանկյունից: Այսպես.

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝

13. Դատական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց կարող է տրվել մինչև մեկ տարի ժամկետով փոխանցվող մուրհակ, համապատասխան դատարանի վճռի, դատավճռի և որոշման կամ արբիտրաժային տրիբունալի վճռի հիման վրա տրված կատարողական թերթը ներկայացվելուց հետո՝ քսան օրվա ընթացքում:

Փոխանցվող մուրհակի օրական տոկոսադրույքի չափը հաշվարկվում է մուրհակի տրամադրման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված վերաֆինանսավորման տոկոսադրույքով, ընդ որում, տոկոսները հաշվարկվում են մուրհակի տրամադրման օրվանից մինչև դրա մարման օրն ընկած ժամանակաշրջանի համար: Փոխանցվող մուրհակի տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը<sup>52</sup>:

ՀՀ Կառավարության 2000 թվականի օգոստոսի 7-ի թիվ 436 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գումարի բռնագանձման համար դատարանի կողմից տրված կատարողական թերթը և հարկադիր կատարողի համապատասխան որոշումը նախարարությունում ուղղակիորեն կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջոցով ստացվելուց հետո նույն կարգի 5-րդ կետում նշված պայմանների բացակայության, ինչպես նաև այն դեպքում, երբ թեև Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ուղղակի վճարում նախատեսող սույն կարգի 5-րդ կետում նշված պայմաններն առկա են, սակայն կատարողական թերթի ստացման օրվանից սկսած 20-րդ օրվա դրությամբ բյուջետային ծախսերը կարգավորող օրենքով սահմանված առաջնահերթ ծախսերի իրականացման կապակցությամբ անհնար է կատարել տվյալ վճարումը, նախարարությունը պարտավոր է տվյալ պարտատիրոջ անունով, իսկ կատարողական վարույթի շրջանակներում օրենքով սահմանված կարգով ձևակերպված իրավահաջորդության դեպքում՝ նոր պարտատիրոջ անունով կազմել համապատասխան գումարի անվանական արժեքով մուրհակ և կատարողական թերթն ստանալու օրվանից սկսած 20 օրացուցային օրվա ընթացքում այն առձեռն կամ պատվիրված փոստով տրամադրել կատարողական վարույթն իրականացնող հարկադիր

<sup>52</sup> <https://www.irtek.am/views/act.aspx?aid=150079>

կատարման ծառայության համապատասխան մարզային ստորաբաժանմանը՝ պարտատիրոջը (մուրհակատեր) հանձնելու համար<sup>53</sup>:

Այսպիսով, պետական մարմնից բռնագանձման վերաբերյալ վճիռների կատարումը հաճախ կարող է պահանջել կատարողական թերթի և հարկադիր կատարողի՝ կատարողական վարույթի հարուցման մասին համապատասխան որոշման ներկայացման պահանջ: Նշված փաստաթղթերը ստանալուց հետո 20-օրյա ժամկետում սահմանված դեպքերում պահանջատիրոջը կարող է տրամադրվել փոխանցելի մուրհակ: Բացի այդ, պետության դեմ վճռի հիման վրա կատարողական վարույթ հարուցել պարտադրված անձը ստիպված է նաև սպասել մինչև մեկ տարի՝ վճռի փաստացի կատարման (գումարի տրամադրման) համար: Ընդ որում, դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո մինչև մուրհակի տրամադրման օրն ընկած ժամանակահատվածը բացակայում է պետության կողմից դրամական պարտավորության կատարման կետանցի համար պարտավորության գումարի նկատմամբ տոկոսի հաշվարկման հնարավորությունը:

ՀՀ Ֆինանսների նախարարությունը փոխանցվող մուրհակների կիրառման պրակտիկայի առնչությամբ մեր կողմից կատարված հարցմանն ի պատասխան՝ հայտնել է դիրքորոշում առ այն, որ ՀՀ պետական բյուջեից գումարի բռնագանձման պահանջ նախատեսող դատական ակտերի կատարման շրջանակներում մուրհակի թողարկումը ոչ թե ինքնին ենթադրվող միջոցառում է, այլ «ծայրահեղ» միջոց, որը կիրառվում է բացառապես այն դեպքերում, երբ դատական ակտի կատարման այլ եղանակները բացակայում են կամ անհնարին են: Այնուամենայնիվ, այս խնդիրներին, ինչպես նաև գործնականում դրանց ունեցած տարբեր դրսևորումներին մանրամասն անդրադարձ է կատարել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը իր 2020 թվականի տարեկան հաղորդմամբ<sup>54</sup>, որով բարձրացվել են գործնականում մուրհակների հաճախակի տրամադրման պրակտիկային առնչվող խնդիրներ:

Գտնում ենք, որ պետական մարմինների դեմ դրամական միջոցների բռնագանձման դատական ակտերի կատարմանն առնչվող վերոգրյալ կարգավորումները ուղղակիորեն հակասում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին:

## *ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

**Վերոգրյալ խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է.**

<sup>53</sup> ՀՀ Կառավարության 2000 թվականի օգոստոսի 7-ի N 436 որոշում «Դատական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի մուրհակների տրամադրման կարգը հաստատելու մասին», <https://www.irtek.am/views/act.aspx?aid=10789>:

<sup>54</sup> 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf>:

1. Օրենսդրական փոփոխությունների կատարման միջոցով բացառել դատական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի մուրհակների տրամադրման հնարավորությունը, ինչպես նաև պահանջատիրոջ կողմից նշված գործերով կատարողական թերթ ստանալու և կատարողական վարույթ հարուցելու պահանջը:

## *ԽՆԴԻՐ*

---

*Անժառանգ գույքի բռնագանձման հնարավորությունը բացառող կարգավորումների  
իրավաչափությանն առնչվող խնդիրներ*

---

## *ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հոդվածի համաձայն՝ «1. Եթե չկան ո՛չ ըստ կտակի և ո՛չ էլ ըստ օրենքի ժառանգներ, կամ նրանք հրաժարվել կամ մեկուսացվել են ժառանգությունից, ապա ժառանգվող գույքը ճանաչվում է անժառանգ: 2. Անժառանգ գույքն անցնում է ժառանգության բացման վայրի համայնքի սեփականությանը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 72-րդ գլխի կարգավորումները վկայում են այն մասին, որ համայնքը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1224-րդ հոդվածի իմաստով ձեռք չի բերում ժառանգի կարգավիճակ, թեև համապատասխան գույքը վերջինիս անցնում է սեփականության իրավունքով:

Այլ կերպ ասած՝ համայնքը անժառանգ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք չի բերում ժառանգման իրավունքով, հետևաբար՝ չի կրում այդ գույքով մահացած սեփականատիրոջ պարտատերերի պահանջները բավարարելու պարտականություն, ինչպես կլինեի ժառանգական զանգվածը օրենքով կամ կտակով՝ ըստ ժառանգման իրավունքի ձեռք բերելու դեպքում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի ուժով (1. Ժառանգները, ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո, իրենց անցած գույքի արժեքի սահմաններում հատուցում են սույն օրենսգրքի 1242 հոդվածում նշված ծախսերը: 2. Ինչպես անմիջապես ժառանգության բացման, այնպես էլ ժառանգության ընդունման իրավունքի փոխանցման

*արդյունքում ժառանգություն ստացած ժառանգը պատասխանատվություն է կրում այդ երկու հիմքերով ստացված գույքի արժեքի սահմաններում: 3. Իրենց անցած ժառանգության արժեքի սահմաններում ժառանգները կրում են համապարտ պատասխանատվություն):*

Օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայի հիշյալ խնդիրները չարդարացված անհավասար դրություն են ստեղծում ժառանգման իրավունքով ժառանգությունը ընդունած անձանց և համայնքի միջև՝ ոչ իրավաչափորեն սահմանափակելով պահանջատիրոջ իրավունքները:

Խնդրի կարգավորման տեսանկյունից ուշադրության է արժանի դիտարկել Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգավորումը: Այսպես, ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 1151-րդ հոդվածի համաձայն՝ անժառանգ գույքը անցնում է համայնքի կամ պետության սեփականությանը ժառանգման իրավունքով<sup>55</sup>: Նշված գույքի վրա պարտատերերի պահանջով բռնագանձում տարածելու հարցի վերաբերյալ պարզաբանում է սրվել Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի պլենումի 2012 թվականի մայիսի 29-ի թիվ 9 «Ժառանգության գործերով դատական պրակտիկայի մասին» որոշմամբ<sup>56</sup>: Որոշման 60-րդ կետում արձանագրված է, որ ժառանգությունն ընդունած բոլոր ժառանգները՝ անկախ ժառանգության հիմքից և ժառանգության ընդունման եղանակից (այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնությունը, դաշնային քաղաքներ՝ Մոսկվան, Սանկտ Պետերբուրգը և համայնքները) պատասխանատվություն են կրում ժառանգատուի գույքով՝ վերջինիս պարտավորությունների չափով:

## ***ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ***

**Վերոգրյալ խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է.**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարել անհրաժեշտ փոփոխություններ՝ անժառանգ գույքի նկատմամբ սահմանելով համայնքի ժառանգման իրավունքը՝ դրա բոլոր իրավական հետևանքներով, այդ թվում պարտատիրոջ կողմից ներկայացված պահանջների հիման վրա այն բռնագանձելու հնարավորությունը:

<sup>55</sup> Հասանելի է հետևյալ հղմամբ՝

[http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_34154/5646edf4af763454a22ff6e4e5a9846cc7f4215f/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_34154/5646edf4af763454a22ff6e4e5a9846cc7f4215f/):

<sup>56</sup> Հասանելի է հետևյալ հղմամբ՝ [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_130453/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_130453/):

## ԲԱԺԻՆ 8

### Հարկադիր կատարողների՝ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակին առնչվող խնդիրներ

#### ԽՆԴԻՐ

*Պարտապանի գույքի և եկամուտների իրական դրության բացահայտմանն ուղղված գործիքակազմի և լիազորությունների ընդլայնման, կատարողական գործողությունների արդյունավետության բարձրացման խնդիրներ*

#### ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի Դատական ակտերի հարկադիր կատարման հաջողված փորձի վերաբերյալ ուղեցույցով (CEPEJ(2015)10)<sup>57</sup> միջազգային համեմատական փորձից առանձնացվել են հարկադիր կատարման ընթացակարգերի արդյունավետության բարձրացմանն ուղղված կարգավորումներ:

Այսպես, նշված ուղեցույցում կարևորվում է պարտապանի ունեցվածքի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության գործիքակազմը: Վճիռների (այլ ակտերի) կատարման արդյունավետությունը մեծապես կախված է պարտապանի իրական գույքային դրության վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվություն տիրապետումից:

Պարտատիրոջից տեղեկություններ ստանալուց բացի, պարտապանի ակտիվների վերաբերյալ տեղեկություններ (անշարժ, շարժական գույքը, բանկային տվյալները, պարտապանի բանկային հաշիվների կարգավիճակը, պարտապանի կողմից վճարման ենթակա հարկերի գումարը, պարտապանին վճարված աշխատավարձերը և այլն) կարող են հավաքագրվել ինչպես պարտապաններից, այնպես էլ երրորդ անձանցից (օրինակ՝

<sup>57</sup> Commission for the Efficiency of Justice (CEPEJ), Good practice guide on enforcement of judicial decisions, CEPEJ(2015)10, available at <https://rm.coe.int/european-commission-for-the-efficiency-of-justice-cepej-good-practice-/16807477bf>

պետական մարմիններից կամ հանրային իրավունքի իրավաբանական անձանց, ինչպես նաև ցանկացած անձի գործատուից կամ կազմակերպությունից, որտեղ պարտապանը ունի բանկային հաշիվ):

Ըստ Ուղեցույցի՝ ակտիվների ուսումնասիրության առաջին տեսակը պայմանավորված է պարտապանի հետ համագործակցությամբ և կարող է իրականացվել «ակտիվների հայտարարագրման» ընթացակարգով (լուծում, որն, ի թիվս այլոց, ընտրվել է Գերմանիայի, Դանիայի, Հունաստանի, Իսպանիայի և Իտալիայի կողմից): «Գույքի հայտարարագրման» եղանակով տեղեկատվության հավաքագրումն արդյունավետությունը մեծապես պայմանավորված է այն պատասխանատվության միջոցներով, որոնք կարող են նշանակվել, եթե պարտապանները չներկայացնեն կամ դիտավորյալ թերի կամ ոչ ճշգրիտ հայտարարագրեր ներկայացնեն հարկադիր կատարողին»<sup>58</sup>:

Երկրորդ տեսակը հիմնականում ենթադրում է տարբեր ռեեստրների և/կամ տվյալների բազաների հասանելիության ապահովումը (այս լուծումն ընտրել են Եվրոպական շատ երկրներ, ներառյալ Անգլիան և Ուելսը, Բելգիան, Բուլղարիան, Էստոնիան, Ֆրանսիան, Հունգարիան, Լիտվան, Սլովակիան, Սլովենիան, Լեհաստանը, Պորտուգալիան, Չեխիան, Ռուսաստանի Դաշնությունը, Սլովակիան, Սլովենիան և Շվեդիան): Այս մոտեցման արդյունավետությունը, ըստ Ուղեցույցի, պայմանավորված է ռեեստրներ և/կամ տվյալների բազաներ մուտք գործելու մեխանիզմներով և դրանց բովանդակությամբ (Օրինակ, Շվեդիայի համապատասխան մարմինները ուղղակիորեն մուտք ունեն մի շարք ռեեստրներ, որոնք բովանդակում են ակտիվների մասին համապարփակ տեղեկատվություն: Դրանք ներառում են հարկային ռեեստրը, որը պարունակում է բոլոր հարկատուների կողմից ներկայացված հայտարարագրերում նշված բոլոր տեղեկությունները (եկամուտ, գործատուի ինքնություն, վարկեր և այլն): Համապատասխան պաշտոնատար անձինք կարող են տվյալներ ստանալ Շվեդիայի սոցիալական ապահովագրության գործակալությունից (այս գործակալությունը տեղեկատվություն է տրամադրում պարտապանի ստացած կենսաթոշակների, նպաստների և տարբեր սոցիալական վճարումների մասին): Ապահովվում է նաև իրավաբանական անձանց, ընկերությունների գրանցամատյանի (պարունակում է այնպիսի տեղեկատվություն, ինչպիսին է ընկերության սեփականատերերի հասցեն կամ անունը), տրանսպորտային միջոցների գրանցամատյանի (պարունակում է տրանսպորտային միջոցների և դրանց ներկա և նախկին սեփականատերերի մասին տեղեկություններ), բնակարանային նպաստների գրանցամատյանի, ամուսնության գրանցամատյանի (որը ներառում է տեղեկություններ ամուսնական պայմանագրերի մասին), բաժնետերերի ռեգիստրի (ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերի սեփականատերերի նույնականացում), հողային ռեգիստրի (պարունակում է տեղեկություններ շենքերի և դրանց սեփականատերերի մասին), առևտրային կազմակերպություններում գրավադրումների գրանցամատյանի հասանելիությունը: Այս ռեգիստրների ուսումնասիրությունը թույլ է տալիս ամբողջական պատկերացում կազմել պարտապանի բոլոր ակտիվների մասին:

<sup>58</sup> EUROPEAN COMMISSION FOR THE EFFICIENCY OF JUSTICE (CEPEJ) Good practice guide on enforcement of judicial decisions, Point 7, available at <https://rm.coe.int/european-commission-for-the-efficiency-of-justice-cepej-good-practice-/16807477bf>.



Կատարողական գործողությունների իրականացման համար կարևոր է նաև պարտապանի պարտավորությունների մասին տեղեկացվածության ապահովումը: Որոշ մասնակից պետություններ մշակել են կատարողական գործողությունների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման համակարգեր: Սա, մասնավորապես, վերաբերում է Շվեդիային (տեղեկատվությունը հասանելի է «պարտապանների ռեեստրում»), Պորտուգալիային (Պորտուգալիայի Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 717-րդ հոդված՝ «Կատարողական գործողությունների համակարգչային գրանցում» և 718-րդ հոդված՝ «Տվյալների ուղղում, թարմացում, ջնջում և վերանայում») և Բելգիային (Բելգիայի դատական օրենսգրքի 1389 հոդված), որի ստեղծած համակարգը ամենաառաջադեմներից մեկն է Եվրոպայում, հիմնված է կենտրոնացված համակարգչային տվյալների բազայի վրա, որի կառավարումը վստահված է Բելգիայի դատական կարգադրիչների ազգային պալատին: Այդ համակարգը պարունակում է տեղեկատվություն բոլոր պարտապանների մասին, որոնց նկատմամբ հարուցված է կատարողական վարույթ: Տեղեկատվությունը հասանելի է միայն նշված պաշտոնատար անձանց համար: Որևէ բռնագանձում (արգելադրում) չի կարող կատարվել առանց այս տվյալների բազայից պարտապանի գույքի վերաբերյալ տեղեկանալու, ինչը թույլ է տալիս հարկադիր կատարողին գնահատել պարտքը վերականգնելու հնարավորությունները:

Տվյալների կենտրոնացված համակարգը, որպես հարկադիր կատարման արդյունավետ գործիքակազմ կարող է որոշակիորեն լուծել Հայաստանի Հանրապետությունում հարկադիր կատարման վարույթներում արձանագրված սույն հետազոտությամբ բարձրացված խնդիրները: Այս հետևությունը անմիջականորեն բխում է նաև Նախարարների կոմիտեի Հարկադիր կատարման վերաբերյալ թիվ Rec(2003)17 հանձնարարականից<sup>59</sup> (3-րդ բաժին, 6-րդ կետ), որին համապատասխան՝ ԵԽ անդամ պետությունները պետք է սահմանեն պարտապանների գույքի հետախուզման և բռնագանձման հնարավորինս արդյունավետ միջոցներ, պետք է ապահովվի պարտապանների գույքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության արագ և արդյունավետ հավաքագրման հնարավորություն՝ ռեեստրներում և այլ աղբյուրներում առկա տեղեկատվության հասանելիության միջոցով: Վերոգրյալ հանձնարարականի առավել արդյունավետ կատարումը ապահովելուն ուղղված Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի ուղեցույցի<sup>60</sup> 1.2. (40) կետով սահմանվում է պարտապանի գույքի վերաբերյալ տեղեկատվության արագ և գերադասելի է՝ անմիջական հասանելիության տրամադրման առաջարկը:

Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի Դատական ակտերի հարկադիր կատարման հաջողված փորձի վերաբերյալ ուղեցույցի (CEPEJ(2015)10)<sup>61</sup>

<sup>59</sup> Recommendation Rec(2003)17 of the Committee of Ministers to member states on enforcement, available at [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectID=09000016805df135](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805df135).

<sup>60</sup> Guidelines for a better implementation of Recommendation Rec(2003)17 of the Committee of Ministers to member states on enforcement, available at [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectID=09000016805cfc45](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805cfc45), [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectID=09000016805cf79c](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805cf79c).

<sup>61</sup> Commission for the Efficiency of Justice (CEPEJ), Good practice guide on enforcement of judicial decisions, CEPEJ(2015)10, available at <https://rm.coe.int/european-commission-for-the-efficiency-of-justice-cepej-good-practice-16807477bf>.

համաձայն՝ ներպետական օրենսդրությունը հարկադիր կատարողներին պետք է ապահովի ուղղակի, անվտանգ էլեկտրոնային մուտք ակտիվների մասին տեղեկատվություն պարունակող ռեգիստրներին (ինչպես Հստոնիայում, Լիտվայում, Շվեդիայում և Լատվիայում): Ավելորդ ընթացակարգային ծախսերից խուսափելու համար կարող է հասանելիություն տրվել հատկապես ոչ հրապարակային ռեեստրներին, որոնցում հավաքագրվում են մի քանի տեսակի տեղեկատվություն, օրինակ՝ հարկային մարմինների (ինչպես Շվեդիայում) և սոցիալական ապահովության մարմինների կողմից վարվող ռեեստրներին:

Լիտվայի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ի թիվս ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լիազորությունների, սահմանում է նաև հարկադիր կատարման հետևյալ միջոցները<sup>62</sup>. գույքային իրավունքների վրա բռնագանձում տարածելը, պարտապանի կողմից այլ անձանց դրամ, գույք փոխանցելու կամ այլ պարտավորությունների կատարման արգելքը, պարտապանի իրավունքները հաստատող փաստաթղթերի առգրավումը, պարտապանի ակտիվների կառավարումը և դրանցից ստացված եկամուտների օգտագործումը պարտավորությունը մարելու համար, հակընդդեմ պահանջների հաշվանցումը: Առանձնակի ուշադրության է արժանի նաև պարտատիրոջ գույքի վրա բռնագանձում տարածելու համար ընդհանուր համատեղ սեփականության մեջ բաժինները որոշելու ընթացակարգը: Մասնավորապես, ըստ գործող կարգավորման, հարկադիր կատարողը արգելանք է դնում ընդհանուր համատեղ սեփականության վրա և առաջարկում պարտապանին 20-օրյա ժամկետում ընդհանուր գույքում համասեփականատերերի բաժինները նոտարական կարգով առանձնացնելու և հարկադիր կատարողին համապատասխան փաստաթղթերը ներկայացնելու համար: Շահագրգիռ անձանց առարկության դեպքում, ժամկետ է սահմանվում՝ բաժինը որոշելու նպատակով դատարան դիմելու համար: Սահմանված ժամկետում դիմում չներկայացնելու դեպքում հարկադիր կատարողը դադարեցնում է տվյալ գույքի վրա բռնագանձման գործընթացը: Նույն կատարողական փաստաթղթերի հիմքով տվյալ գույքի վրա բռնագանձում տարածելու գործընթացը կարող է վերսկսվել մեկ տարի անց:

Հստոնիայի օրենսդրությամբ<sup>63</sup> դատարանի վճռի հիման վրա դատական կարգադրիչը կարող է օրենքից բխող պարտավորության կատարման համար անհրաժեշտ հանգամանքները պարզելու նպատակով վարկային կազմակերպությունից պահանջել քաղվածք նաև երրորդ անձի հաշվից, եթե կատարողական փաստաթղթից բխող դրամական պահանջը, որը կատարվում է պարտապանի նկատմամբ կամ պահանջների ընդհանուր գումարը գերազանցում է մեկ ամսվա համար սահմանված նվազագույն աշխատավարձի չափը: Դիմումի ներկայացման մասին կատարողը անհապաղ տեղեկացնում է երրորդ անձին: Դատարան ներկայացված դիմումում կարգադրիչը հիմնավորում է հաշվի քաղվածք ստանալու անհրաժեշտությունը, ինչպես նաև ներկայացնում է պահանջվող հաշվապահական տվյալների ցանկը և ժամանակահատվածը, որի սկիզբը կարող է նշվել նաև

---

<sup>62</sup> Lietuvos Respublikos civilinio proceso kodekso patvirtinimo, įsigaliojimo ir įgyvendinimo įstatymas.

Civilinio proceso kodeksas <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/TAIS.162435?jfwid=11kq9432ui>.

<sup>63</sup> Կատարողական վարույթի մասին Հստոնիայի Հանրապետության օրենսգիրք, <https://bit.ly/3xxWrqI>:

մինչև կատարողական վարույթ հարուցելուց առաջ վեց ամիսը: Դատարանը հարկադիր կատարողի դիմումը քննում է հատուկ վարույթի կարգով: Երրորդ անձի հաշվից քաղվածքը տրամադրվում է դատական կարգադրիչին անվճար: Օրենքով նախատեսված է նաև վարույթի համար անհրաժեշտ տեղեկատվությունը (ներառյալ պարտապանի բնակության վայրի կամ գտնվելու վայրի մասին տվյալներ, ինչպես նաև նրա կոնտակտային տվյալները) երրորդ անձանցից ստանալու հարկադիր կատարողի լիազորությունը: Օրենքը սահմանում է նաև պարտապանի պարտականությունը կատարողի պահանջով ներկայացնել իր ունեցվածքի ցանկը, ներառյալ պարտավորությունների ցանկը: Այն, բացի առկա գույքից, պետք է պարունակի նաև այն գույքը, որը մինչև կատարողական վարույթ հարուցելը վերջին մեկ տարվա ընթացքում օտարվել է պարտապանի կողմից՝ «Մնանկության մասին» օրենքի 117-րդ հոդվածի իմաստով իրեն մերձավոր անձանց և պարտապանի կողմից կատարողական վարույթ հարուցելուն նախորդող վերջին երկու տարվա ընթացքում նվիրաբերված գույքը:

Ֆրանսիայում<sup>64</sup> երրորդ անձի տրամադրության տակ գտնվող դրամական միջոցների վրա արգելանք դնելը թույլ է տալիս կարգադրիչին վերադարձնել պարտապանի գումարը, որը տրվել է երրորդ անձին փոխառությամբ: Այն անձը, ով ունի պարտապանին պատկանող դրամ կամ գույք, իր պարտավորությունների սահմաններում դառնում է պարտապան՝ կատարողական վարույթով պարտապանի պարտավորությունների համար: Նման կարգավորում գործում է նաև Բելգիայում<sup>65</sup>:

Մերքիայում, այն դեպքում, եթե կատարողական վարույթի ընթացքում անհրաժեշտ է հայտնաբերել ավտոտրանսպորտային միջոցներ կամ այլ առարկաներ, ապա կատարողն իրավունք ունի հանձնարարական տալ հայտարարություն տեղադրելու վերաբերյալ: Կատարողը հանձնարարականը հանձնում է ոստիկանության մարմին՝ կատարման: Հայտարարությունը տեղադրվում է կատարողական թերթ տված դատարանի ընդդատության տարածքում իրավասություն ունեցող ոստիկանության կողմից: Ոստիկանությունը ժամանակավորապես առգրավում է ավտոմեքենան, շրջանառության այլ առարկաները: Կատարողը պարտավոր է առգրավված իրերն ընդունել դրանց առգրավման փաստի մասին ծանուցումը ստանալու օրվանից 24 ժամվա ընթացքում (ոստիկանությունը ներգրավվում է ծառայությունների մատուցման շրջանակում, որի արժեքը ներառվում է կատարողական ծախսերում)<sup>66</sup>: Մերքիայի օրենսդրությունը նախատեսում է նաև պարտապանի դրամական պահանջի զիջումը՝ որպես դրամային պարտավորության մարման միջոց:

Ղրղզստանի օրենսդրությամբ<sup>67</sup> սահմանվում է նաև երրորդ անձանց պարտապանի պահանջի զիջման իրավունքի արգելքը: Պարտավորության կատարումից խուսափելու վտանգի դեպքում պարտապանի նկատմամբ իրականացվում են կանխարգելիչ միջոցներ, այդ թվում՝ պարտապանի ազգանունը, անունը, հայրանունը և այլ անձնագրային տվյալների փոփոխության, վիճակախաղի շահումներ տրամադրելու, նվեր կանխիկ գումար և/կամ այլ

<sup>64</sup> [https://studwood.net/1200462/pravo/frantsuzskaya\\_model\\_ispolneniya\\_pozitivnyy\\_pravovoy\\_opyt\\_rossii](https://studwood.net/1200462/pravo/frantsuzskaya_model_ispolneniya_pozitivnyy_pravovoy_opyt_rossii)

<sup>65</sup> Տե՛ս <http://www.europe-eje.eu/en/fiche-thematique/note-2-actors-enforcement>:

<sup>66</sup> LAW ON ENFORCEMENT AND SECURITY INTEREST. Art. 146. <https://www.paragraf.rs/propisi/law-on-enforcement-and-security-interest.html>

<sup>67</sup> ՂՀ օերնքը «հարկադիր կատարողների կարգավիճակի և կատարողական վարույթի մասին», հոդված 58 <http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/111522>:

գույք, նյութական օգնություն կամ ժառանգություն ստացված լինելու փաստերի արձանագրման և իրազեկելու մեխանիզմների սահմանման միջոցով:

Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի Դատական ակտերի հարկադիր կատարման հաջողված փորձի վերաբերյալ ուղեցույցով (CEPEJ(2015)10)<sup>68</sup> խրախուսվում է առանձին տեսակի պարտավորությունների համար (մասնավորապես, ալիմենտային պարտավորությունների) ներպետական օրենսդրությամբ ֆիզիկական անձ հանդիսացող պարտապանի անվճարունակության դեպքում փոխհատուցման մեխանիզմների սահմանումը՝ օրինակ պետական մարմնի կողմից միանվագ գումար տրամադրելու հնարավորություն (օրինակ՝ վճարված տույժերից և տուգանքներից գոյացած միջոցների հաշվին /կուլեկտիվ վերականգնում/): Կուլեկտիվ միջոցներով կատարման ձախողման ռիսկի ապահովագրումը նախատեսված է, օրինակ՝ Լիտվայի, Էստոնիայի օրենսդրությամբ<sup>69</sup>:

Գտնում ենք, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության գործունեության արդյունավետությունը առավելագույնս ապահովելու նպատակով անհրաժեշտ է ընդլայնել Ծառայության լիազորությունների շրջանակը՝ սահմանելով հարկադիր կատարման միջոցների և գործիքակազմերի բավարար ծավալ: Միևնույն ժամանակ պարտապանի անվճարունակությամբ պայմանավորված՝ ալիմենտային պարտավորությունների կատարման անհնարինության դեպքում քննարկման ենթակա պետք է դառնա ալիմենտային ֆոնդի ներդրման անհրաժեշտության հարցը:

Խնդրի կապակցությամբ ձեռնարկվող միջոցների շարքում Ծառայության կողմից մատնանշվել է «Կատարողական վարույթի մասին» նոր օրենքի նախագծի մշակումը, որի շրջանակում, ի թիվս այլոց, կարգավորման ենթակա են նաև պարտապանի և նրա գույքի հայտնաբերման գործիքակազմը և ներկայումս առկա գործիքակազմի ընդլայնման հնարավորությունները:

## ***ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ***

### **Վերոգրյալ խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է.**

1. Վերանայել ՀՀ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության լիազորությունների շրջանակը և գործիքակազմը, այդ թվում՝ անձին փաստացի պատկանող գույքը կամ փաստացի ստացվող եկամուտը/աշխատավարձը հայտնաբերելու նպատակով անհրաժեշտ լիազորությունների սահմանմամբ:

<sup>68</sup> Commission for the Efficiency of Justice (CEPEJ), Good practice guide on enforcement of judicial decisions, CEPEJ(2015)10, available at <https://rm.coe.int/european-commission-for-the-efficiency-of-justice-cepej-good-practice-/16807477bf>.

<sup>69</sup> Էստոնիայի Կատարողական վարույթի մասին օրենսգիրք, հոդված 18 (1.1), Լիտվայի քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 622:

2. «Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագծի մշակման գործընթացում կիրառել հարկադիր կատարման բնագավառում առաջադեմ միջազգային փորձից բխող կարգավորումներ և գործիքներ:

3. Քննարկման առարկա դարձնել ալիմենտային ֆոնդի ներդրման հնարավորությունը պարտապանի անվճարունակությամբ պայմանավորված՝ ալիմենտային պարտավորությունների կատարման անհնարինության դեպքերի համար: